ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

26 հուլիսի 2022թ.

Հ/Հ	Հաշվետվության բովանդակությունը	Էջը
1	Ընդհանուր տեղեկություններ ստուգումների վերաբերյալ	1
2	Ստուգումների արդյունքները՝ ըստ ստուգաթերթերի	15
3	Խախտումների բնույթները՝ ըստ ստուգումների արդյունքում կազմված ակտերի և լիազոր մարմինների ղեկավարներին ներկայացված գրությունների	26
4	Առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները և բաշխվածությունը՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ստուգված դպրոցների	43
5	Ընդհանուր տեղեկատվություն դպրոցներին տրված հանձնարարականների վերաբերյալ	46
6	Ընդհանուր տեղեկատվություն դպրոցներին տրված հանձնարարականների և 1-ին եռամսյակում տնօրենների կողմից ներկայացված կատարողականների համադրման արդյունքների վերաբերյալ	48
7	Տեղեկատվություն ստուգումների արդյունքում արձանագրված կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ	52
8	Ամփոփում	64

1. Ընդհանուր տեղեկություններ ստուգումների վերաբերյալ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի № 1139-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի ստուգաթերթերը, ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) գործունեության 2022 թվականի ծրագիրը, ստուգումների ժամանակացույցը, ի կատարումն տեսչական մարմնի ղեկավարի համապատասխան հրամանների՝ **2022 թվականի 2-րդ եռամսյակում 31** հանրակրթական հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ դպրոց) իրականացվել են ստուգումներ:

Հաշվետվությունում ներկայացված են **38** դպրոցների ստուգման արդյունքները, քանի որ 2022 թվականի 1-ին եռամսյակում ստուգված **7** դպրոցների (Հրազդանի հ. 13 ավագ, ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի հ. 1, Հրազդանի հ. 11 հիմնական, Քասախի հ. 2,

Նոր Արտամետի, ՀՀ Վայոց ձորի մարզի Աղավնաձորի, Մալիշկայի միջնակարգ դպրոցներ) ստուգման արդյունքներն ամփոփվել են 2-րդ եռամսյակում:

Ստուգումներն իրականացվել են **դպրոցներում** կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության ապահովման նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելու, ինչպես նաև կրթական գործունեության ռիսկայնությունը վերլուծելու, գնահատելու, տվյալների բազա ձևավորելու նպատակով:

2022 թվականին ստուգումներն իրականացվում են **11** ստուգաթերթերով, որոնք, ըստ բովանդակության, ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Հ/Հ	***Ստուգաթերթի NN***	***Ստուգաթերթի բովանդակություն***
1	***N 01***	***Կրթության կազմակերպում***
2	***N 02***	***Ուսուցչի պարտականություններ***
3	***N 03 (1-55 հարցեր)***	***Տնօրենին ներկայացվող պահանջներ***
4	***N 04***	***Տնօրենի տեղակալի, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, դասղեկի/դասվարի պարտականություններ***
5	***N 05***	***Մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագիր***
6	***N 07***	***Խորհրդակցական մարմիններ***
7	***N 08***	***Ուսուցչի թափուր տեղի մրցույթ***
8	***N 11***	***Դպրոց սովորողի ընդգրկում, տեղափոխում, ազատում***
9	***N 12***	***Սովորողի, այդ թվում՝ բացակայած սովորողի, փոխադրում, ավարտում***
10	***N 14***	***Վճարովի ծառայություններ***
11	***N 15***	***Օլիմպիադայի կազմակերպում և անցկացում***

2022 թվականի 2-րդ եռամսյակում,՝ ըստ ՀՀ մարզերի բաշխվածության, ամփոփվել են ներքոնշյալ **38** դպրոցների ստուգման արդյունքները.

- ***ՀՀ Արագածոտնի մարզի 1*** *դպրոց. Ուջանի միջնակարգ դպրոց,*
- ***ՀՀ Սյունիքի մարզի 2*** *դպրոցներ. Ջերմուկի հ. 3 միջնակարգ, Սիսիանի ավագ դպրոցներ,*
- ***ՀՀ Արմավիրի մարզի 2*** *դպրոցներ. Արմավիրի միջնակարգ դպրոց, Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցու «Էօրնեկեան հանրակրթական դպրոց» հանրակրթական ուսումնական հաստատություն-հիմնարկ (այսուհետ՝ Էօրնեկեան հանրակրթական դպրոց,*
- ***ՀՀ Տավուշի մարզի 2*** *դպրոցներ. Իջևանի հ.հ. 3, 4 հիմնական դպրոցներ,*
- ***ՀՀ Վայոց ձորի մարզի 3*** *դպրոցներ. Աղավնաձորի, Մալիշկայի, Քարագլխի միջնակարգ դպրոցներ,*
- ***ՀՀ Գեղարքունիքի մարզի 4*** *դպրոցներ. Գավառի հ. 1, Ճամբարակի հ. 1, Լեռնահովիտի հիմնական, Խաչաղբյուրի միջնակարգ դպրոցներ,*
- ***ՀՀ Կոտայքի մարզի 6*** *դպրոցներ. Գառնիի հ. 1, Աբովյանի հ. 10, Հրազդանի հ. 11 հիմնական, Քասախի հ. 2, Նոր Արտամետի միջնակարգ, Հրազդանի հ. 13 ավագ դպրոցներ,*
- ***ՀՀ Լոռու մարզի 8*** *դպրոցներ. Վանաձորի հ.հ. 20, 23, 27 հիմնական, Շնողի, Սարամեջի, Կաթնառատի, Լեջանի միջնակարգ դպրոցներ, «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի վարժարան (այսուհետ՝ Վանաձորի վարժարան),*

*- **ՀՀ Շիրակի մարզի 10** դպրոցներ. Արթիկի հ. 4 հիմնական, Գյումրու հ.հ. 9, 25, 38 հիմնական, Գյումրու հ. 27, Մարալիկի հ. 1, Աշոցքի, Հայկավանի, Ձորակապի, միջնակարգ դպրոցներ, Գյումրու «Օյունջյան» միջնակարգ դպրոց-վարժարան (այսուհետ՝ Օյունջյան վարժարան):*

Ստուգված **38** դպրոցներից **15-ը** հիմնական են, **18-ը՝** միջնակարգ, **2-ը՝** ավագ, **1-ը՝** վարժարան, **1-ը՝** միջնակարգ դպրոց-վարժարան, **1-ը՝** հանրակրթական ուսումնական հաստատություն-հիմնարկ:

Յուրաքանչյուր դպրոցի համար ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատված է ընդունվել ներքոնշյալ ժամանակահատվածից մինչև տվյալ դպրոցում ստուգումը սկսելու օրը.

– ***2019 թվականի հունվարի 8-ից.***

Գառնիի հ. 1, Գավառի հ. 1, Ճամբարակի հ. 1, Աբովյանի հ. 10, Վանաձորի հ.հ. 20, 23, 27, Գյումրու հ.հ. 9, 25, Լեջանի հիմնական, Քասախի հ. 2 միջնակարգ դպրոց, Ջերմուկի հ. 3, Ձորակապի, Հայկավանի, Նոր Արտամետի, Աղավնաձորի, Խաչաղբյուրի, Մալիշկայի, Շնողի, Սարամեջի, Լեջանի, Կաթնառատի, Աշոցքի, Քարագլխի միջնակարգ, Հրազդանի հ. 13, Սիսիանի ավագ դպրոց, Էօրնեկեան հանրակրթական դպրոց, Վանաձորի վարժարան,

➢ ***2019 թվականի մարտի 6-ից.***

Արմավիրի միջնակարգ դպրոց,

– ***2019 թվականի մարտի 23-ից.***

Հրազդանի հ. 11 հիմնական դպրոց,

➢ ***2019 թվականի փետրվարի 8-ից.***

Գյումրու հ. 27 միջնակարգ դպրոց,

– ***2019 թվականի ապրիլի 8-ից.***

Արթիկի հ. 4 հիմնական, Մարալիկի հ. 1 միջնակարգ դպրոցներ,

– ***2019 թվականի ապրիլի 9-ից.***

Օյունջյան վարժարան,

– ***2019 թվականի մայիսի 3-ից.***

Գյումրու հ. 38 հիմնական դպրոց,

– ***2019 թվականի հոկտեմբերի 3-ից.***

Ուջանի միջնակարգ դպրոց,

– ***2019 թվականի հոկտեմբերի 18-ից.***

Իջևանի հ.հ. 3, 4 հիմնական դպրոցներ:

Ստուգված **38 դպրոցներից 35-ում (92%)** հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է **35** ակտ:

Խախտում չի արձանագրվել Վանաձորի հ. 23 հիմնական, Մարալիկի հ. 1 և Արմավիրի միջնակարգ դպրոցներում:

Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների՝ դպրոցների տնօրեններին տրամադրվել են ակտերի, Վանաձորի հ. 23 հիմնական, Մարալիկի հ. 1 և Արմավիրի միջնակարգ դպրոցների տնօրեններին՝ ստուգման արդյունքում կազմված տեղեկանքների մեկական օրինակները, իսկ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ՀՀ ԿԳՄՍ) նախարարին, ՀՀ Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի, Շիրակի մարզպետներին՝ ակտերի, տեղեկանքների պատճենները:

Ստուգումների արդյունքում պարզվել է, որ **38** դպրոցներից **34-ի (89%)** կանոնադրություններում չեն ներառվել ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով կատարված փոփոխությունները: Կանոնադրության անհամապատասխանություն չի հայտնաբերվել հետևյալ **4 (11%)՝** Հրազդանի հ. 11 հիմնական, Արմավիրի, Ուջանի և Քարագլխի միջնակարգ դպրոցների կանոնադրություններում:

Վերոգրյալի մասին գրություններով տեղեկացվել են համապատասխան (ըստ ենթակայության) լիազորված մարմինների ղեկավարները, բացառությամբ՝ ՀՀ Արագածոտնի մարզպետի (նշված մարզպետարանի ենթակայությամբ գործող դպրոցի կանոնադրությունում ստուգման արդյունքում անհամապատասխանություն չի հայտնաբերվել):

Համապատասխան գրություններով ներքոնշյալ լիազորված մարմինների ղեկավարներին տեղեկացվել է նաև՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարին.

Վանաձորի վարժարանի կանոնադրությունում չեն ներառվել ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով կատարված փոփոխությունները, որի վերաբերյալ տեղեկացվել է նաև «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորը՝ հետևյալ առաջարկությամբ. հաշվի առնելով կրթական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները՝ մշակել և սահմանված կարգով հաստատել վարժարանի կանոնադրությունը:

ՀՀ Շիրակի մարզպետին.

Մարզպետի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի գրության հիման վրա **Արթիկի հ. 4 հիմնական դպրոցի** մաթեմատիկայի ուսուցչի թափուր տեղի համար 30.12.2020թ. հայտարարված մրցույթը չի կայացել: Ըստ նշված գրության՝ հիմք են ընդունվել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի հավելված՝ «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը հաստատելու մասին» N 396-Ն հրամանով հաստատված կարգի II բաժնի 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ կետերով սահմանված դրույթները *(**11-րդ կետի.** «Թափուր տեղը համալրելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը Հաստատության տնօրենը հրապարակում է «Կրթություն» շաբաթաթերթում», **12-րդ կետի.** «Հայտարարության տեքստում նշվում է. 1) Հաստատության անվանումը, 2) Թափուր տեղի անվանումը, շաբաթական ժամերի քանակը, 3) սույն կարգի 16-րդ կետով սահմանված փաստաթղթերի ցանկը՝ բնօրինակները և պատճենները, 4) մրցույթի անցկացման օրը, ժամը, տեղը և փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետը», **13-րդ կետի.** «Մրցույթին մասնակցելու մասին փաստաթղթերն ընդունվում են «Կրթություն» շաբաթաթերթում հրապարակման օրվանից՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում», **14-րդ կետի.** «Մրցույթի անցկացման օր նշանակվում է փաստաթղթերի ընդունման ավարտից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում» **պահանջներ**):*

Ըստ դպրոցում առկա փաստաթղթերի՝ գրության մեջ **նշված պատճառները հիմնավոր չեն եղել:**

Գյումրու հ. 27 միջնակարգ դպրոցի կառավարման խորհրդի արձանագրությունների մատյանում 2019թ. սեպտեմբեր ամսից մինչև 2022թ. մարտ ամիսը նիստերի արձանագրությունները առկա չեն, հետևաբար, առկա չեն 2019-2020,

2020-2021 ուսումնական տարիների ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունների (հաշվետվություններն առկա են), 2020-2021, 2021-2022 ուսումնական տարիների տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակների քննարկման վերաբերյալ նիստերի արձանագրությունները:

ՀՀ Տավուշի մարզպետին.

Իջևանի հ.հ. 3, 4 հիմնական դպրոցների տնօրենների բացակայությունների ընթացքում ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատվածում լիազոր մարմնի կողմից տնօրենների պաշտոնակատարներ չեն նշանակվել, որի հետևանքով խախտվել է ՀՀ կառավարության՝ 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 69-րդ կետի պահանջը՝ *«Տնօրենի բացակայության, ինչպես նաև տնօրենի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում լիազորված մարմինը՝ ըստ ենթակայության, հասպատության տնօրենի պաշտոնակատար է նշանակում տնօրենի տեղակալներից մեկին կամ հասպատության տնօրենի պարտականությունները կատարող այլ անձի, ով տվյալ հասպատության խորհրդի անդամ չէ»:*

Առաջարկվել է դպրոցի տնօրենի բացակայության դեպքում ապահովել կանոնադրության համապատասխան կետի պահանջի կատարումը:

ՀՀ Վայոց ձորի մարզպետին.

ՀՀ Վայոց ձորի մարզպետի՝ 10.05.2021թ. «ՀՀ Վայոց ձորի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին» N 56-Ա որոշմամբ հաստատված հավելվածում առանձին խորհուրդների անվանական կազմերում համայնքի ղեկավարը **Ջերմուկի հ. 3 միջնակարգ դպրոցի** համար ներկայացրել է 2-ական անդամ, մինչդեռ սահմանված կարգի պահանջների համաձայն *մարզային ենթակայության հասպատությունների առանձին խորհուրդներում մարզպետն առաջադրում է խորհրդի 4 անդամ, <u>որից մեկին</u> գրավոր ձևով մարզպետին է ներկայացնում տվյալ համայնքի ղեկավարը»:*

Առաջարկվել է սահմանված կարգով կատարել համապատասխան փոփոխությունները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին. Էօրնեկեան հանրակրթական դպրոցում 2 մանկավարժական աշխատողների ընտրությունն իրականացվել է կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումով, ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատվածում գերազանցվել են դպրոցի տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր, միջնակարգ ընդհանուր կրթական ծրագրերով գործունեության լիցենզիաներով հատկացված սովորողների համակազմի սահմանային տեղերը, ինչպես նաև դպրոցի կանոնադրության որոշ դրույթներ չեն համապատասխանում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին, որի հետևանքով չի ապահովվել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջի կատարումը. *«Ոչ պետական ուսումնական հասպատության կանոնադրությունը չպետք է հակասի «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն օրենքի դրույթներին»*:

Առաջարկվել է դպրոցի կանոնադրությունը համապատասխանեցնել կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին, ինչպես նաև միջոցներ

ձեռնարկել լիցենզիաներով հատկացված սովորողների համակազմի սահմանային տեղերի ավելացման համար:

ՀՀ ԿԳՄՍ նախարարին, ՀՀ Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի, Վայոց ձորի, Սյունիքի, Գեղարքունիքի, Շիրակի, Լոռու և Տավուշի մարզպետներին, Վանաձորի «Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի վարժարանի ռեկտորին առաջարկվել է՝

- քննարկել ստուգումների արդյունքները, ձեռնարկել համապատասխան միջոցներ (բացառությամբ՝ Վանաձորի հ. 23 հիմնական, Արմավիրի և Մարալիկի հ. 1 միջնակարգ դպրոցների, քանի որ խախտում չի արձանագրվել),

- ապահովել համապատասխան փոփոխությունների՝ դպրոցի կանոնադրության մեջ ամրագրումն ու սահմանված կարգով հաստատումը (բացառությամբ՝ Հրազդանի հ. 11 հիմնական, Արմավիրի, Ուջանի և Քարագլխի միջնակարգ դպրոցների, քանի որ նրանց կանոնադրություններում անհամապատասխանություն չի հայտնաբերվել),

- արդյունքների մասին տեղեկացնել տեսչական մարմնին:

Ստուգված 38 դպրոցների ստուգումների արդյունքների վերլուծությունը, ըստ ստուգաթերթերի, ունի հետևյալ պատկերը.

❖ **Ամենաբարձր ռիսկային միավորը** գրանցվել է Ճամբարակի հիմնական դպրոցում՝ **11,6 միավոր,** իսկ **ամենացածրը՝ 0 միավոր,** Վանաձորի հ. 23 հիմնական, Մարալիկի հ. 1 և Արմավիրի միջնակարգ դպրոցներում:

❖ Ստուգված **38** դպրոցներից **23-ը (60,5%) բարձր** ռիսկային խմբի դպրոցներ են, **15-ը (39.5%)՝ միջին**:

❖ **Առավել ռիսկային է** տնօրենին ներկայացվող պահանջների կատարումը, քանի որ **N 03 ստուգաթերթի** խախտումներ արձանագրվել են ստուգված **38** դպրոցներից **32-ում (84%), ոչ ռիսկային՝** սովորողի, այդ թվում՝ բացակայած սովորողի, փոխադրման, ավարտման գործընթացները, քանի որ ըստ **N 12 ստուգաթերթի** խախտում չի արձանագրվել:

Համեմատելով ստուգումների արդյունքների միջինացված միավորները՝ կարող ենք նշել, որ կրթական գործընթացի իրականացումը 38 դպրոցների միջինացված ռիսկային միավորի համեմատ **պակաս ռիսկային է** ՀՀ Շիրակի, ապա ՀՀ Լոռու մարզերի ստուգված դպրոցներում, **ավելի ռիսկային՝** ՀՀ Կոտայքի մարզի ստուգված դպրոցներում:

2022 թվականի 2-րդ եռամսյակում ստուգված **38** դպրոցներից **16-ը (42%)** տեսչական մարմնի կողմից ստուգվել են նաև նախորդ տարիներին. **4-ը՝** 2018, **12-ը՝** 2019 թվականներին:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ **16** դպրոցների ձևավորված ռիսկային միավորները **2022 թվականի** ստուգման արդյունքում նախորդ ռիսկային միավորի համեմատ՝ **նվազել են՝ 10** դպրոցներում **(63%), աճել են 3 (19%), մնացել է նույնը՝ 1 (6%) և ռիսկային միավորը զրոյացել է՝ 2 (12%)** դպրոցներում:

Ստուգումների արդյունքում արձանագրվել են «Կրթության մասին» և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև կրթության ոլորտը կարգավորող **10** նորմատիվ իրավական ակտերի **118** պահանջների խախտումներ:

38 դպրոցներից **35-ում (92%)** հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենդրության պահանջների **327** խախտումներ, որոնցից **43-ը (13%)** նշվել են լիազոր մարմինների ղեկավարներին ուղղված գրություններում:

Առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները՝ **ըստ դպրոցների թվի** (%) վերաբերել են՝

- կանոնադրության անհամապատասխանությանը՝ **34 (89%),**
- մանկավարժական աշխատողների նշանակմանը՝ **22 (58%),**
- խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը՝ **16 (42%),**
- սովորողների համակազմի ձևավորմանը՝ **15 (39%),**
- ուսումնական պլանի պահանջների կատարմանը՝ **14 (37%),**
- պաշտոնային պարտականությունների կատարմանը և օլիմպիադայի, ներքին գնահատման գործընթացների իրականացմանը՝ **11-ական (29%-ական) դպրոցներում,**

իսկ՝ **ըստ խախտումների թվի** (%), վերաբերել են՝

- մանկավարժական աշխատողների նշանակմանը՝ **72 (22%),**
- խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը՝ **46 (14%),**
- պաշտոնային պարտականությունների կատարմանը **44 (13%),**
- կանոնադրության անհամապատասխանությանը՝ **34 (10%),**
- սովորողների համակազմի ձևավորմանը՝ **27 (8%),**
- ներքին գնահատման գործընթացին՝ **26 (8%),**
- ուսումնական պլանի պահանջների կատարմանը՝ **22 (7%),**
- օլիմպիադայի գործընթացին՝ **21 (6%) խախտումներ:**

Ստուգման արդյունքների վերլուծությունից հետևում է, որ 2022 թվականի 2-րդ եռամսյակում ստուգված դպրոցների գրեթե մեկ երրորդը պատշաճ չեն իրականացրել ներքին գնահատման և օլիմպիադայի գործընթացների իրականացումը, տնօրենը և մանկավարժական աշխատողները՝ իրենց պաշտոնային պարտականությունները, 37%-42%-ը՝ խորհրդակցական մարմինների ձևավորումը, գործունեությունը, սովորողների համակազմի ձևավորումը, ուսումնական պլանի պահանջների կատարումը, իսկ դպրոցների գերակշռող մասը (կեսից ավելին) չունի օրենսդրական փոփոխություններով ամրագրած կանոնադրություն, ինպես նաև սահմանված կարգով չի իրականացրել մանկավարժական աշխատողների նշանակումը:

Մանկավարժական աշխատողների նշանակման **72** խախտումները, որոնք կազմել են խախտումների ընդհանուր թվի մեկ հինգերորդը (**22%),** վերաբերել են **48** մանկավարժական աշխատողների նշանակմանը, որոնց գերակշիռ մասը կազմել են

76%-ը (55 խախտում) ուսուցչի, իսկ **24%-ը (17** խախտում)՝ այլ մանկավարժական աշխատողների նշանակումները:

Սահմանված պահանջների խախտումներով նշանակված **48** մանկավարժական աշխատողներից **37-ը (77%)՝** ուսուցիչներն են (փոխարինող ուսուցիչ, մինչև մրցույթ, մրցույթի հաղթող, առանց մրցույթ, ներառյալ նաև՝ ոչ մասնագետ), իսկ **11-ը (23%)՝** այլ մանկավարժական աշխատողներ (տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ (այսուհետ՝ ՄԿԱ), հատուկ մանկավարժ, սոցիալական մանկավարժ, հոգեբան, գրադարանավար, ուսուցչի օգնական):

Խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը վերաբերող խախտումների դեպքում հարկ է նշել, որ, եթե մի շարք դեպքերում դպրոցների մանկավարժական խորհուրդները պատշաճ չեն իրականացրել իրենց վերապահված լիազորությունները, ապա որոշ դեպքերում՝ վերազանցել են. մանկավարժական խորհուրդը կայացրել է որոշում սովորողին երկրից բացակայելու պատճառով դպրոցից ազատման վերաբերյալ, որի հետևանքով չի ապահովվել նաև՝ սովորողի միջնակարգ կրթության պարտադիր լինելու պահանջը, 2-րդ դասարանի սովորողին տվյալ դասարանի դասընթացը կրկնելու վերաբերյալ՝ հիմք ընդունելով ծնողի դիմումը, լրացուցիչ քննությունների և ստուգողական աշխատանքների արդյունքում 3-ական առարկաներից անբավարար գնահատված սովորողներից մեկին հաջորդ դասարան փոխադրելու (առանց վերաքննություններ հանձնելու), իսկ մյուսին՝ դասընթացը կրկնելու վերաբերյալ, որի հետևանքով չի ապահովվել նաև՝ սովորողների կրթության հաջորդականության սկզբունքը:

Որոշ դեպքերում դպրոցներում չեն ձևավորվել մեթոդական միավորումներ (ներառյալ՝ տարրական կրթության), աշակերտական խորհուրդ, իսկ կրթության բնագավառի օրենսդրության պահանջների համաձայն՝ խորհրդակցական մարմինները ստեղծվում են դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով:

Սովորողների համակազմի ձևավորման խախտումները վերաբերել են սովորողի կրթության հաջորդականության սկզբունքի ապահովմանը.

- ՌԴ-ից վերադարձած սովորողները համապատասխան փաստաթղթերի առկայության պարագայում ընդգրկվել են սահմանվածից 1 դասարան բարձր,
- սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկումը կազմակերպվել է սովորողի տարիքային խմբից 3 դասարան ցածր,
- 200 դասաժամից ավել բացակայություն ունեցող սովորողները փոխադրվել են հաջորդ դասարան,
- որոշ դեպքերում սովորողների դպրոց ընդունելությունը և (կամ) ազատումը չի իրականացվել ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա կամ 11-րդ դասարանի սովորողն ազատվել է դպրոցից իր դիմումի հիման վրա և չի շարունակել կրթությունը որևէ այլ ուսումնական հաստատությունում՝ որի

հետևանքով չի ապահովվել նաև՝ սովորողի միջնակարգ ընդհանուր կրթության պարտադիր լինելու պահանջը:

Ստուգված դպրոցների գրեթե մեկ երրորդում արձանագրվել են առարկայական ծրագրի ժամաքանակի անհամապատասխանության վերաբերյալ խախտումներ, որոնց գերակշռող մասը վերաբերել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված «Ձեռնարկատիրական կրթություն» առարկային:

Ուսումնական պլանի պահանջների խախտումներից հետևում է, որ՝

- նշված դպրոցներում կրթության գործընթացը չի կարգավորվել օրինակելի ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով,
- դպրոցի տնօրենը ուսումնական պլանին համապատասխան չի ապահովել կրթական ծրագրերի իրականացումը,
- տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը պատասխանատու չի եղել դպրոցում ուսումնական ծրագրերի կատարման համար,
- ուսուցիչները չեն ապահովել տվյալ առարկայի կրթական ծրագրի կատարումը՝ խախտելով կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջների կատարումը:

Պաշտոնային պարտականությունների կատարման խախտումներից առանձնացվել է հետևյալը. դպրոցի տարբեր դասարանների մի շարք սովորողների նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ «նկատողություն», ընդ որում դասղեկները և դասվարները մանկավարժական խորհրդի քննարկմանը չեն ներկայացրել սովորողներին՝ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը: Հատկանշական է այն հանգամանքը, որ նշված կարգապահական տույժը կիրառվել է նաև 3-րդ դասարանի սովորողների նկատմամբ:

Սահմանված պահանջների համաձայն՝ դպրոցի ներքին կարգապահական կանոնները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում օրենքով ու կանոնադրությամբ սահմանված կարգով կարգապահական տույժերը կարող են կիրառվել միայն միջին և ավագ դպրոցների սովորողների նկատմամբ, ինչպես նաև սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու համար մինչ այդ մանկավարժական խորհուրդը պետք է կայացնի համապատասխան որոշում:

Օլիմպիադայի գործընթացի խախտումները վերաբերել են դպրոցական փուլը նախապատրաստելու և անցկացնելու նպատակով առարկայական հանձնաժողովների և կազմկոմիտեի ձևավորմանը, նրանց գործառույթների իրականացմանը: Որոշ դեպքերում նրանց գործառույթներն իրականացվել են համապատասխան առարկայական մեթոդական միավորումների կողմից: Արձանագրվել է նաև խախտում, համաձայն որի՝ դպրոցում 2 ուսումնական տարի չեն կազմակերպվել դպրոցական օլիմպիադաներ:

Հարկ է նշել, որ օլիմպիադաների կազմակերպման նպատակներից են տաղանդավոր, շնորհալի և ստեղծագործական կարողություն ունեցող երեխաների հայտնաբերումը և նրանց հետ անհատական աշխատանքի կազմակերպումը, ուսումնական առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրությունների զարգացումը և այդ առարկաներից խոր ու կայուն գիտելիքներ ստանալուն նպաստելը:

Ստուգումների արդյունքում պարզվել է, որ ստուգված դպրոցների գրեթե մեկ հինգերորդը **(18%)** իր կողմից վարչական և մանկավարժական աշխատողների, սովորողների և ծնողների մասնակցությամբ չի իրականացրել դպրոցի գործունեության վերլուծություն, հետևաբար չի իրականացրել նաև հաջորդող գործառույթները՝ ներկայացում կառավարման և խորհրդակցական մարմիններին, հրապարակում:

Ի լրումն առավել հաճախ կրկնվող խախտումների՝ հարկ է նշել նաև կրթության կազմակերպմանը վերաբերող խախտումները, որոնք հիմնականում վերաբերել են 120-200 դասաժամ բացակայություն ունեցող սովորողների լրացուցիչ քննությունների և ստուգողական աշխատանքների կազմակերպման, ներառյալ՝ կիսամյակային և տարեկան գնահատման գործընթացներին:

Հիմք ընդունելով կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության մի շարք նոր պահանջների ուժի մեջ մտնելը՝ կարելի է ակնկալել, որ 120-200 դասաժամ բացակայություն ունեցող սովորողների կրթության կազմակերպմանը վերաբերող խախտումները կսկսեն նվազել:

Այսպես. պարտադիր կրթությունից դուրս մնացած դպրոցահասակ երեխա է համարվում նաև՝ վեց աշխատանքային օր անընդմեջ կամ ամսվա մեջ ավելի քան 10 օր տվյալ հաստատություն չհաճախած (չհաճախող) 6-18 տարեկան սովորողը: Վերջինիս համար հաստատությունը պարտավոր է ձեռնարկել մի շարք գործողություններ՝ մեկօրյա ժամկետում, որն արդեն իսկ կկանխի սովորողի երկար ժամանակահատվածով բացակայություններ ունենալը:

Ի լրումն վերոգրյալին՝ դպրոցը (նաև՝ հեռավար ուսուցման կենտրոնը) կարող է սահմանված դեպքերում կազմակերպել հեռավար ուսուցում:

Ինչպես արդեն նշվել է՝ **2022 թվականի 2-րդ եռամսյակում** ստուգումներ իրականացվել են ՀՀ Արագածոտնի մարզի **1,** ՀՀ Սյունիքի, Արմավիրի, Տավուշի մարզերի՝ **2-ական,** ՀՀ Վայոց ձորի մարզի՝ **3,** ՀՀ Գեղարքունիքի մարզի՝ **4,** ՀՀ Կոտայքի մարզի՝ **6,** ՀՀ Լոռու մարզի՝ **8** և ՀՀ Շիրակի մարզի՝ **10** դպրոցներում:

Առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները՝ ըստ ՀՀ մարզերի ստուգված դպրոցների, ունեն հետևյալ պատկերը.

- մանկավարժական աշխատողների նշանակման առավել շատ խախտումներն արձանագրվել են ՀՀ Արագածոտնի և Տավուշի մարզերում ստուգված **բոլոր** դպրոցներում՝ **100%,** խախտում չի արձանագրվել ՀՀ Սյունիքի մարզում,
- կանոնադրության անհամապատասխանության առավել շատ խախումները՝ ՀՀ Սյունիքի, Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերում ստուգված **բոլոր** դպրոցներում՝ **100%,** խախտում չի արձանագրվել ՀՀ Արագածոտնի մարզում,

- խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը վերաբերող առավել շատ խախտումները՝ ՀՀ Շիրակի մարզում ստուգված դպրոցների **60%-ում,** խախտում չի արձանագրվել ՀՀ Արագածոտնի, Սյունիքի և Արմավիրի մարզերում,
- պաշտոնային պարտականությունների կատարմանը վերաբերող առավել շատ խախտումներն արձանագրվել են ՀՀ Սյունիքի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում ստուգված դպրոցների **50%-ում,** իսկ խախտում չի արձանագրվել՝ ՀՀ Արագածոտնի և Արմավիրի մարզերում:

Ստուգումների արդյունքում հայտնաբերված **327** խախտումներից ժամկետանց են համարվել **222-ը (68%),** որոնց գերակշռող մասը՝ ըստ բնույթների, վերաբերել է՝ մանկավարժական աշխատողների նշանակմանը՝ **23%-ը,** խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը՝ **14%-ը,** ներքին գնահատման գործընթացի իրականացմանը՝ **12%-ը,** պաշտոնային պարտականությունների կատարմանը՝ **12%-ը,** սովորողների համակազմի ձևավորմանը **11%-ը,** ուսումնական պլանի պահանջների կատարմանը՝ **11%-ը,** օլիմպիադայի ընթացակարգին՝ **10%-ը:**

Վերոնշյալ խախտումները համարվել են ժամկետանց, քանի որ այդ խախտումների հետևանքները վերացնել արդեն իսկ հնարավոր չէ՝ կատարվել են նախորդող ուսումնական տարիներին կամ խախտման հետևանքները վերացվել են ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատվածում:

Ինչպես արդեն նշվել է՝ խախտումներ արձանագրվել են 38 դպրոցներից 35-ում (92%): Խախտումների հետևանքները վերացնելու նպատակով տեսչական մարմնի ղեկավարի համապատասխան կարգադրագրերով տրվել են **62** հանձնարարականներ 35 դպրոցներից **20-ին (57%):**

Առավել հաճախ կրկնվել են հետևյալ բնույթի հանձնարարականները.

- մանկավարժական աշխատողների նշանակում. **12 (60%)** դպրոցների՝ **20 (32%),**
- խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության իրականացում. **11 (55%)** դպրոցների՝ **15 (24%),**
- տնօրենի պաշտոնային պարտականությունների կատարում. **7 (35%)** դպրոցների՝ **19 (31%)** հանձնարարականներ:

2022 թվականի 2-րդ եռամսյակում ստուգված **38 դպրոցների** տվյալները՝ ըստ խախտումների և հանձնարարականների թվի, ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Հ/Հ	*Դպրոցի անվանում*	*Խախտումների թիվ*	*Ժամկետանց խախտումների թիվ*	*Հանձնարարականների թիվ*	*Լիազոր մարմնին ներկայացված խախտումների թիվ*
1	*Քասախի հ. 2 մ/դ*	*11*	*4*	*6*	*1*
2	*Նոր Արտամետի մ/դ*	*6*	*4*	*1*	*1*
3	*Աղավնաձորի մ/դ*	*5*	*2*	*2*	*1*
4	*Մալիշկայի մ/դ*	*7*	*4*	*2*	*1*

5	Հրազդանի հ. 13 ա/դ	2	1	0	1
6	Հրազդանի հ. 11 հ/դ	9	5	4	0
7	Գառնիի հ. 1 հ/դ	18	13	4	1
8	Խաչաղբյուր մ/դ	3	2	0	1
9	Ճամբարակի հ. 1 հ/դ	28	19	8	1
10	Գավառի հ. 1 հ/դ	2	1	0	1
11	Աբովյանի հ. 10 հ/դ	3	1	1	1
12	Հայկավանի մ/դ	16	14	1	1
13	Ձորակապի մ/դ	5	4	0	1
14	Մարալիկի հ. 1 մ/դ	1	0	0	1
15	Շնողի մ/դ	18	14	3	1
16	Ուջանի մ/դ	9	6	3	0
17	Սարամեջի մ/դ	19	13	5	1
18	Կաթնառատի մ/դ	4	3	0	1
19	Արթիկի հ. 4 հ/դ	4	2	0	2
20	Օյունջյան վարժարան	3	2	0	1
21	Լեջանի մ/դ	24	17	6	1
22	Վանաձորի հ. 23 հ/դ	1	0	0	1
23	Սիսիանի ա/դ	5	4	0	1
24	Քարագլխի մ/դ	3	2	1	0
25	Լեռնահովիտի հ/դ	19	14	4	1
26	Իջևանի հ.4 հ/դ	4	1	1	2
27	Իջևանի հ.3 հ/դ	23	15	6	2
28	Վանաձորի հ. 20 հ/դ	2	0	1	1
29	Վանաձորի հ. 27 հ/դ	4	3	0	1
30	Արմավիրի մ/դ	0	0	0	0
31	Գյումրու հ. 9 հ/դ	11	10	0	1
32	Գյումրու հ. 27 մ/դ	9	7	0	2
33	Գյումրու հ. 25 հ/դ	12	10	1	1
34	Վանաձորի վարժարան	3	2	0	1
35	Գյումրու հ. 38 հ/դ	18	15	2	1
36	Ջերմուկի հ. 3 մ/դ	3	1	0	2
37	Էօրնեկեան հանրակրթական դպրոց	6	1	0	5
38	Աշոցքի մ/դ	7	6	0	1
	Ընդամենը	327	222	62	43

Ելնելով Աղյուսակ 2-ի տվյալներից՝ **38** դպրոցների ստուգման արդյունքում.

❖ Խախտումներ արձանագրվել են **35 (92%)** դպրոցներում, խախտումների հետևանքները վերացնելու նպատակով հանձնարարականներ տրվել են **20 (57%)** դպրոցների, քանի որ **15 (43%)** դպրոցներում արձանագրված բոլոր խախտումները եղել են ժամկետանց (այդ խախտումների հետևանքները վերացվել են կամ վերացնել հնարավոր չէ):

❖ Ըստ նկարագրության՝ հայտնաբերվել են **327** խախտումներ, որոնցից **43-ը (13%)** համապատասխան գրություններով ներկայացվել են լիազորված մարմինների ղեկավարներին:

❖ **327** խախտումներից **222-ը (68%)** համարվել են ժամկետանց, իսկ **62-ի** հետևանքները վերացնելու նպատակով տեսչական մարմնի ղեկավարի

կարգադրագրերով տրվել են համապատասխանաբար՝ **62 (19%)** հանձնարարականներ:

Ստուգումների արդյունքում **առավել մեծ թվով**

- ***խախտումներ արձանագրվել են***

*Ճամբարակի հ. 1 հիմնական դպրոցում՝ **28 (9%)** խախտում,*

- խախտումներ ներկայացվել են լիազոր մարմնին.

Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝

Էջմիածնի հանրակրթական դպրոցի խախտումների

*վերաբերյալ՝ **5 (12%)** խախտում,*

- ***ժամկետանց խախտումներ առկա են.***

*Ճամբարակի հ. 1 հիմնական դպրոցում՝ **19 (9%)** խախտում,*

- հանձնարարականներ տրվել են

*Ճամբարակի հ. 1 հիմնական դպրոցին՝ **8 (13%)** հանձնարարական:*

Վերոգրյալից հետևում է, որ Ճամբարակի հ. 1 հիմնական դպրոցում արձանագրվել են առավել մեծ թվով խախտումներ՝ ներառյալ ժամկետանց, ինչպես նաև տրվել են առավել մեծ թվով հանձնարարականներ:

Ստուգված **38** դպրոցների խախտումների և հանձնարարականների տոկոսային համամասնությունը ներկայացվել է Գծապատկեր 1-ում.



2021 թվականի 2-րդ եռամսյակը, որպես հանձնարարականների կատարողականների ներկայացման ժամկետ, սահմանվել է **33** դպրոցներին տրված **123** հանձնարարականների համար:

33 դպրոցներից **26-ը (79%)** կատարողականները ներկայացրել են սահմանված ժամկետում, **7-ը (21%)**՝ սահմանված ժամկետից ուշ:

Տրված **123** հանձնարարականներից **41-ը** վերաբերել են մանկավարժական աշխատողների նշանակմանը, **13-ը**՝ մեթոդմիավորումների գործունեությանը, **9-ը՝** ուսումնական պլանի պահանջների կատարմանը, **60-ը**՝ այլ բնույթի: Այլ բնույթի

հանձնարարականները հիմնականում վերաբերել են մանկավարժական խորհրդի գործունեությանը, ուսումնական պլանի պահանջների կատարմանը, կանոնադրության համապատասխանեցմանը, լիցենզիայի ապահովմանը, լիցենզիայի սահմանային թվերի համապատասխանեցմանը, սովորողների համակազմի, աշակերտական խորհրդի ձևավորմանը և այլն:

Ըստ դպրոցներից ստացված կատարողականների՝ **123** հանձնարարականներից կատարվել են **85-ը (69%),** կատարվել են մասամբ՝ **22-ը (18%),** չեն կատարվել **16-ը (13%)**:

Տրված հանձնարարականներից **41-ը (33%)** (առավել մեծ թվով), որոնք վերաբերել են մանկավարժական աշխատողների նշանակմանը, տրվել են **33** դպրոցներից **22–ին (67%),** որոնցից կատարվել են **21-ը (51%)**, ընթացքի մեջ են **18-ը (44%)**, չեն կատարվել **2-ը (5%):** Մանկավարժական աշխատողների նշանակման հանձնարարականների **76%-ը** (**31** հանձնարարական) վերաբերել է սահմանված կարգով ուսուցչի նշանակմանը:

Հարկ է նշել, որ չկատարված հանձնարարականները վերաբերել են դպրոցի կանոնադրության, վարչական աշխատողների ուսումնական ծանրաբեռնվածության համապատասխանեցմանը, սովորողների համակազմի, մեթոդական միավորումների ձևավորմանը:

Ընթացքի մեջ գտնվող **22** հանձնարարականներից **18-ը** վերաբերել են մանկավարժական աշխատողների նշանակումներին:

Ելնելով ստուգումների արդյունքներից, ստուգված դպրոցներին տրված հանձնարարականների և 1-ին եռամսյակում ներկայացված հանձնարարականների կատարողականների վերլուծությունից հետևում է, որ **գերակա խնդիրը շարունակում է մնալ** մանկավարժական աշխատողների, հիմնականում՝ ուսուցիչների, սահմանված կարգով նշանակումը:

Տնօրենների ներկայացրած կատարողականներում հանձնարարականների մի մասի կատարումը դեռևս ընթացքի մեջ է: Խնդիր է նաև այն հանգամանքը, որ տնօրենների զգալի մասը հետագայում լրացուցիչ չի ներկայացնում տեղեկատվություն հանձնարարականների վերջնական կատարման վերաբերյալ, որի հետևանքով մեծանում է տվյալ դպրոցի ռիսկայնությունը և ստուգումների ծրագրում ընդգրկվելու հավանականությունը, իսկ խնդիրը վերջնական լուծում չի ստանում. մնում է անորոշ, թե որքանով են վերացվել խախտման հետևանքները, ինչը կարող է իր ազդեցությունն ունենալ կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության և ուսուցման որակի վրա:

2. Ստուգումների արդյունքները՝ ըստ ստուգաթերթերի

Ստուգումների արդյունքում ձևավորված ռիսկային միավորները՝ ըստ դպրոցների, ներկայացված են դիագրամում (Գծապատկեր 2):



Վերոգրյալից հետևում է, որ

- **ամենաբարձր** ռիսկային միավոր գրանցվել է Ճամբարակի հիմնական դպրոցում՝ **11,6 միավոր**,

- **ամենացածր** ռիսկային միավոր՝ Վանաձորի հ. 23 հիմնական, Մարալիկի հ. 1 և Արմավիրի միջնակարգ դպրոցներում՝ **0 միավոր**:

Նշված դպրոցներից **23-ը (61%) բարձր** ռիսկային խմբի դպրոցներ են, **15-ը (39%)՝ միջին** ռիսկային:

Ստուգման արդյունքների պատկերը՝ ըստ ստուգաթերթերի, այսպիսին է.

<u>N 01 ստուգաթերթ</u> Կրթության կազմակերպում.

Խախտումներ հայտնաբերվել են **15** դպրոցներում **(39%),** որոնք վերաբերել են.

- դպրոցի ուսումնական պլանի անհամապատասխանությանը օրինակելի ուսումնական պլանի պահանջներին՝ **6,**
- առարկայական ծրագրերի անհամապատասխանությանը ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված առարկայական ծրագրերին՝ **8,**
- սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման գործընթացներին՝ **4,**
- սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ (կիսամյակային և տարեկան) գնահատումներին՝ **1** դպրոցում:

<u>N 02 ստուգաթերթ</u> Ուսուցչի պարտականություններ՝ 14 *դպրոցներում* ***(37%):***

Խախտումները վերաբերել են.

- ուսուցչի կողմից կրթական ծրագրի կատարման ապահովմանը՝ **13,**
- մեթոդական միավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին ուսուցչի մասնակցությանը՝ **3,**
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսումնական պլանների կազմմանը և վարմանը՝ **1** դպրոցում:

<u>N 03 ստուգաթերթ</u> Տնօրենին ներկայացվող պահանջներ՝ 32 *դպրոցներում* ***(84%).***

Ստուգումների արդյունքում պարզվել է, որ.

➢ Տնօրենը կառավարման խորհրդի քննարկմանը կամ հավանությանը չի ներկայացրել՝

- դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը՝ **4,**
- արտաքին և ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանքը՝ **8,**
- դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կազմը՝ **7,**
- ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակված՝ դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգը՝ **4,**
- ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները՝ **2** դպրոցներում:

➢ Տնօրենի կողմից սահմանված կարգով չի հաստատվել՝

- ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը՝ **1,**

- տնօրենի տեղակալների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների հաշվետվությունները՝ **1,**

- դասղեկների, մանկավարժների հաշվետվությունները՝ **2** դպրոցներում:

➢ Տնօրենի կողմից սահմանված կարգով չի իրականացվել՝

- մանկավարժական կադրերի ընտրությունը՝ **20,**

- իր տեղակալների, մասնաճյուղի, կառուցվածքային ստորաբաժանումների (մեթոդական միավորումների) ղեկավարների ընտրությունը, աշխատանքի բաշխումը՝ **4** դպրոցներում:

➢ Տնօրենը չի ապահովել՝

- ուսումնական պլանին համապատասխան կրթական ծրագրերի իրականացումը՝ **10,**

- ուսումնական պլանին համապատասխան կրթական գործընթացի կազմակերպումը՝ **5,**

- ներքին կարգապահական կանոնների մշակումը և ներդնումը՝ **1,**

- սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ (կիսամյակային և տարեկան) գնահատման սահմանված կարգով կատարումը՝ **1,**

- ներքին գնահատման գործընթացի սահմանված կարգով իրականացումը՝ **10** դպրոցներում:

➢ Տնօրենը սահմանված կարգով չի ձևավորել սովորողների համակազմը՝ **16,** չի ապահովվել միջնակարգ ընդհանուր կրթության պարտադիր լինելը՝ **1,** կրթության հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին՝ **7** դպրոցներում:

➢ Դպրոցի վարչական աշխատողի ուսումնական ծանրաբեռնվածությունը (համապատասխան որակավորման դեպքում) չի համապատասխանել օրենքով սամանված պահանջներին՝ **4** դպրոցներում:

<u>N 04 ստուգաթերթ</u> Տնօրենի տեղակալի, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, դասղեկի/դասվարի պարտականություններ՝ 11** դպրոցներում **(28,9%).

Ուսումնական ծրագրերի կատարմանը վերաբերող խախտումներ արձանագրվել են **10** դպրոցներում, որոնք վերաբերել են սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությանը, դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրմանը և անհատական ուսուցման պլանի մշակման իրականացմանը և գնահատմանը, սովորողին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացմանը՝ **1-ական,** առարկայական մեթոդական միավորումների աշխատանքների ղեկավարմանը վերաբերող խախտումներ՝ **2** դպրոցներում:

ՄԿԱ գծով տեղակալի որակավորման անհամապատասխանությանը վերաբերող խախտում արձանագրվել է **1** դպրոցում:

<u>N 05 ստուգաթերթ</u> Մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագիր՝ 12** դպրոցներում **(32%).

Խախտումները վերաբերել են հատուկ մանկավարժի, հոգեբանի, սոցիալական մանկավարժի, գրադարանավարի, ՆԶՊ ուսուցչի որակավորումների անհամապատասխանություններին՝ **1-ական** դպրոցներում, հոգեբանի, սոցիալական մանկավարժի, գրադարանավարի պաշտոնային պարտականությունների կատարմանը՝ **1-ական** դպրոցներում, ուսուցչի օգնականի պաշտոնային պարտականությունների կատարմանը՝ **3** դպրոցներում և որակավորման անհամապատասխանությանը՝ **5** դպրոցներում:

***<u>N 07 ստուգաթերթ</u> Խորհրդակցական մարմիններ՝ 16** դպրոցներում **(42%):** Խախտումները վերաբերել են.*

- Մանկավարժական խորհրդի կազմավորմանը՝ **2,**
- մանկավարժական խորհրդի գործառույթներին՝ **8,**
- մեթոդական միավորումների գործառույթներին՝ **3,**
- ծնողական խորհրդի կազմավորմանը և իր կազմից կառավարման խորհրդի անդամի ընտրությանը՝ **1-ական,**
- աշակերտական խորհրդի ձևավորմանը՝ **1** դպրոցում:
-

***<u>N 08 ստուգաթերթ</u> Ուսուցչի թափուր տեղի մրցույթ՝ 13** դպրոցներում **(34%):** Խախտումները վերաբերել են.*

- Ուսուցչի՝ առանց մրցույթի նշանակմանը՝ **3,**
- մրցույթի հայտարարման ժամկետին՝ **1,**
- դասաժամերի տրամադրմանը՝ **8,**
- մրցութային հանձնաժողովի ձևավորմանը՝ **5** դպրոցներում:
-

***<u>N 11 ստուգաթերթ</u> Դպրոց սովորողի ընդգրկում, տեղափոխում, ազատում՝ 8** դպրոցներում **(21%):** Խախտումները վերաբերել են.*

- Սովորողների ընդունելությանը՝ **2,**
- սահմանված ժամկետից ուշ ընդունելությանը՝ **1,**
- այլ երկրում ուսումնառությունն ընդհատած և ՀՀ վերադարձած սովորողի դասարանը որոշելու գործընթացին՝ 3,
- դպրոցից սովորողի ազատելուն՝ 3 դպրոցներում:
-

***<u>N 12 ստուգաթերթ</u> Սովորողների, այդ թվում՝ բացակայած սովորողի, փոխադրում, ավարտում՝** իրավական ակտերի պահանջների խախտում **չի արձանագրվել**:*

<u>N 14 ստուգաթերթ</u> Վճարովի ծառայություններ՝ 1** դպրոցում **(3%).

Հարկ է նշել, որ ստուգված **38** դպրոցներից **36-ը (95%)** ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատվածում վճարովի կրթական ծառայություններ չեն իրականացրել:

Վճարովի ծառայություններ իրականացրած 2՝ Վանաձորի հ. 27 հիմնական և Շնողի միջնակարգ դպրոցներից, խախտում արձանագրվել է Շնողի միջնակարգ դպրոցում, որը վերաբերել է լրացուցիչ կրթության իրականացման համար ծնողի և դպրոցի միջև կնքվող պայմանագրի բացակայությանը: Վանաձորի հ. 27 հիմնական դպրոցը վճարովի ծառայությունն իրականացրել է սահմանված կարգով:

***N 15 ստուգաթերթ Օլիմպիադայի կազմակերպում և անցկացում՝ 9** դպրոցներում (24%).*

Խախտումները վերաբերել են դպրոցական մակարդակում օլիմպիադայի կազմկոմիտեի և առարկայական հանձնաժողովների ձևավորմանը, օլիմպիադայի անցկացման ընթացակարգին:

Խախտում կատարած դպրոցների թիվը՝ ըստ ստուգաթերթերի, ներկայացված է Գծապատկեր 3-ում:



Վերոգրյալից հետևում է, որ ստուգված դպրոցներում՝

- **առավել ռիսկային է** տնօրենին ներկայացվող պահանջների կատարումը, քանի որ **N 03 ստուգաթերթի** խախտումներ արձանագրվել են ստուգված 38 դպրոցներից **32-ում (84%),**

- **ոչ ռիսկային՝** սովորողի, այդ թվում՝ բացակայած սովորողի, փոխադրման, ավարտման գործընթացները, քանի որ **N 12 ստուգաթերթի** խախտում չի արձանագրվել:

Գումարային և միջինացված ռիսկային միավորներն՝ ըստ ստուգաթերթերի և համապատասխան ստուգաթերթի կշռային միավորի նկատմամբ տոկոսային համամասնության, ներկայացված են Աղյուսակ 3-ում.

Աղյուսակ 3

38 դպրոցների ստուգումների արդյունքներ												
Ստուգաթերթ	***N 01***	***N 02***	***N 03***	***N 04***	***N 05***	***N 07***	***N 08***	***N 11***	***N 12***	***N 14***	***N 15***	***Ընդհանուր ռիսկային միավոր***
Գումարային ռիսկային միավոր	**14,4**	**7,7**	**82,9**	**4,1**	**3,6**	**12,2**	**14,2**	**6**	**0**	**0,5**	**9,7**	**155,3**
Միջինացված միավորներ	**0,4**	**0,2**	**2,2**	**0,1**	**0,1**	**0,3**	**0,4**	**0,2**	**0,0**	**0,01**	**0,3**	**4,21**
Ստուգաթերթի ռիսկային միավորի %-ը	**4,2%**	**2,9%**	**9,9%**	**0,9%**	**1,2%**	**2,5%**	**3,1%**	**1,6%**	**0%**	**0,3%**	**12,8%**	**3,6%**

Ըստ Աղյուսակ 3-ի տվյալների՝

- տնօրենի պաշտոնային պարտականությունների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ձևավորվել է N 03 ստուգաթերթի ամենամեծ գումարային, ինչպես նաև միջինացված ռիսկային միավորը. 32 (84%) դպրոցներում,
- օլիմպիադայի կազմակերպման և անցկացման գործընթացի ստուգման արդյունքում ձևավորված N 15 ստուգաթերթի միջին կշռային միավորը կազմել է 0,3, որը տվյալ ստուգաթերթի կշռային միավորի 12,8%-ն է, և ըստ մեծության՝ առաջինն է տոկոսային միավորների շարքում, հետևաբար ստուգված դպրոցներում ռիսկային է նաև՝ օլիմպիադայի կազմակերպման և անցկացման գործընթացը. 9 (24%) դպրոցներում,
- ստուգված դպրոցներում սահմանված կարգով է իրականացվել սովորողի, այդ թվում՝ բացակայած սովորողի, փոխադրման, ավարտման գործընթացները. N 12 ստուգաթերթ՝ խախտում չի արձանագրվել:

Ինչպես արդեն նշվել է ստուգված **38** դպրոցներից **10-ը** ՀՀ Շիրակի, **8-ը՝** ՀՀ Լոռու, **6-ը՝** ՀՀ Կոտայքի, **4-ական՝** ՀՀ Վայոց ձորի, Գեղարքունիքի, **2-ական՝** ՀՀ Տավուշի և Արմավիրի, **1-ական՝** ՀՀ Արագածոտնի և Սյունիքի մարզերի դպրոցներ են:

Քանի որ ստուգված դպրոցների մեջ մեծ թիվ են կազմում ՀՀ Շիրակի, Լոռու, Կոտայքի մարզերի դպրոցները, անդրադառնանք այդ դպրոցներում իրականացված ստուգումների արդյունքում ձևավորված գումարային և միջինացված ռիսկային միավորներին:

ՀՀ Շիրակի մարզի 10 դպրոցներում իրականացված ստուգումների արդյունքում ձևավորված ռիսկային միավորները՝ ըստ ստուգաթերթերի, ներկայացված են Աղյուսակ 4-ում.

Աղյուսակ 4

ՀՀ Շիրակի մարզի 10 դպրոցների ստուգումների արդյունքներ

Ստուգաթերթ	N 01	N 02	N 03	N 04	N 05	N 07	N 08	N 11	N 12	N 14	N 15	Ընդհանուր ռիսկային միավոր
Գումարային ռիսկային միավոր	4,9	1,5	21,5	1	1,2	2,1	3,4	1	0	0	1,2	37,8
Միջինացված միավորներ	0,5	0,2	2,2	0,1	0,1	0,2	0,3	0,1	0	0	0,1	3,8
Ստուգաթերթի ռիսկային միավորի %-ը	5,4%	2,1%	9,8%	0,8%	1,5%	1,6%	2,8%	1%	0%	0%	6%	3,3%

Ըստ Աղյուսակ 4-ի տվյալների՝ ՀՀ Շիրակի մարզի ստուգված դպրոցներում՝

- դարձյալ առավել ռիսկային է տնօրենին ներկայացվող պահանջների կատարումը. N 03 ստուգաթերթի խախտումներ արձանագրվել են 10 դպրոցներից 9-ում (90%),

- ըստ ռիսկայնության՝ երկրորդ տեղում է (ըստ ռիսկայնության միջին միավորի) դպրոցում կրթության կազմակերպման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում՝ ըստ N 01 ստուգաթերթի ձևավորված միջին կշռային միավորը, հետևաբար՝ մարզի ստուգված դպրոցներում խնդրահարույց է նաև կրթության կազմակերպումը,

- ըստ տոկոսային միավորի մեծության երկրորդ տեղում է օլիմպիադայի կազմակերպման և անցկացման գործընթացի N 15 ստուգաթերթի ստուգման արդյունքում ձևավորված միջին կշռային միավորը, ինչը վկայում է այդ դպրոցներում օլիմպիադայի կազմակերպման գործընթացի ռիսկային լինելու մասին,

- ստուգված դպրոցներում սահմանված կարգով է իրականացվել սովորողի, այդ թվում՝ բացակայած սովորողի, փոխադրման, ավարտման գործընթացները. N 12 ստուգաթերթ՝ խախտում չի արձանագրվել,

- վճարովի ծառայությունների իրականացման վերաբերյալ խախտում չի արձանագրվել, քանի որ բոլոր 10 դպրոցներում այն չի իրականացվել. N 14 ստուգաթերթ:

ՀՀ Լոռու մարզի 8 դպրոցներում իրականացված ստուգումների արդյունքում ձևավորված ռիսկային միավորները՝ ըստ ստուգաթերթերի, ներկայացված են Աղյուսակ 5-ում.

Աղյուսակ 5

ՀՀ Լոռու մարզի 8 դպրոցների ստուգումների արդյունքներ												
Ստուգաթերթ	N 01	N 02	N 03	N 04	N 05	N 07	N 08	N 11	N 12	N 14	N 15	Ընդհանուր ռիսկային միավոր
Գումարային ռիսկային միավոր	3,2	1,5	13,3	0,6	0,2	2,7	2,6	2	0	0,5	4,3	30,9
Միջինացված միավորներ	0,4	0,2	1,7	0,1	0	0,3	0,3	0,3	0	0,1	0,5	3,9

Ստուգաթերթի ռիսկային միավորի %-ը	4,4%	2,7%	7,6%	0,6%	0,3%	2,6%	2,7%	2,5%	0%	1,6%	26,9%	3,4%

Ըստ Աղյուսակ 5-ի տվյալների՝ ՀՀ Լոռու մարզի ստուգված դպրոցներում.

- դարձյալ առավել ռիսկային է տնօրենին ներկայացվող պահանջների կատարումը. N 03 ստուգաթերթի խախտումներ են արձանագրվել բոլոր 5 դպրոցներում,

- ըստ ստուգաթերթի կշռային միավորի նկատմամբ միջինացված ռիսկային միավորի՝ երկրորդ տեղում է, իսկ ըստ տոկոսի մեծության՝ առաջին տեղում է օլիմպիադայի կազմակերպման և անցկացման գործընթացը. N 15 ստուգաթերթ,

- սահմանված կարգով է իրականացվել սովորողի, այդ թվում՝ բացակայած սովորողի, փոխադրման, ավարտման գործընթացները. N 12 ստուգաթերթ. խախտում չի արձանագրվել:

ՀՀ Կոտայքի մարզի 6 դպրոցներում իրականացված ստուգումների արդյունքում ձևավորված ռիսկային միավորները՝ ըստ ստուգաթերթերի, ներկայացված են Աղյուսակ 6-ում.

Աղյուսակ 6

ՀՀ Կոտայքի մարզի 6 դպրոցների ստուգումների արդյունքներ												
Ստուգաթերթ	*N 01*	*N 02*	*N 03*	*N 04*	*N 05*	*N 07*	*N 08*	*N 11*	*N 12*	*N 14*	*N 15*	*Ընդհանուր ռիսկային միավոր*
Գումարային ռիսկային միավոր	2,7	1	16,2	0,3	0,2	1,5	5,2	1,5	0	0	0	28,6
Միջինացված միավորներ	0,5	0,2	2,7	0,1	0,0	0,3	0,9	0,3	0,0	0,0	0,0	4,8
Ստուգաթերթի ռիսկային միավորի %-ը	5%	2,4%	12,3%	0,4%	0,4%	1,9%	7,2%	2,5%	0%	0%	0%	4,2%

Համաձայն Աղյուսակ 6-ի տվյալների՝

- ևս բարձր ռիսկային է տնօրենին ներկայացվող պահանջների կատարման գործընթացը. N 03 ստուգաթերթ,

- թե ըստ ստուգման արդյունքում ձևավորված միջին կշռային միավորի, թե ըստ ստուգաթերթի կշռային միավորի նկատմամբ միջինացված ռիսկային միավորի տոկոսի մեծության երկրորդ տեղում են ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ձևավորված միավորները. N 08 ստուգաթերթ,

- բացի սովորողի, այդ թվում՝ բացակայած սովորողի, փոխադրման, ավարտման գործընթացների պահանջների կատարմանն ուղղված գործընթացի. N 12 ստուգաթերթ, խախտում չի արձանագրվել նաև օլիմպիադայի կազմակերպման և անցկացման պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում՝ N 15 ստուգաթերթ, իսկ վճարովի ծառայությունների կատարմանն ուղղված ստուգումների

արդյունքում խախտում չի արձանագրվել, քանի որ այդ դպրոցներում վճարովի ծառայություն չի իրականացվել. N 14 ստուգաթերթ:

Աղյուսակ 7-ում ամփոփ ներկայացված է 38 դպրոցների և ՀՀ Շիրակի, Լոռու, Կոտայքի մարզերի ստուգված դպրոցներում արձանագրված խախտումների ռիսկային միավորների միջինացված միավորների համեմատական պատկերը՝ ըստ ստուգաթերթերի:

Աղյուսակ 7

38 դպրոցների և ՀՀ Շիրակի, Լոռու, Կոտայքի մարզերի ստուգված դպրոցներում արձանագրված խախտումների ռիսկային միավորների միջինացված միավորների համեմատական պատկերը՝ ըստ ստուգաթերթերի			
38 դպրոցների ստուգումների արդյունքներ	***ՀՀ Շիրակի մարզ***	***ՀՀ Լոռու մարզ***	***ՀՀ Կոտայքի մարզ***
N 03 ստուգաթերթ՝ Տնօրենին ներկայացվող պահանջներ միջինացված միավորը 1-ինն է միջինացված միավորների շարքում			
2,2	**2,2**	**1,7**	**2,7**
Տվյալ ստուգաթերթի միջինացված միավորը 2-րդն է միջինացված միավորների շարքում			
N 15 ստուգաթերթ Օլիմպիադայի կազմակերպում և անցկացում **0,3**	**N 01 ստուգաթերթ** Կրթության կազմակերպում **0,5**	**N 15 ստուգաթերթ** Օլիմպիադայի կազմակերպում և անցկացում **0,5**	**N 08 ստուգաթերթ** Ուսուցչի թափուր տեղի մրցույթ **0,9**
Տվյալ ստուգաթերթը ռիսկային չէ			
N 12 ստուգաթերթ Սովորողի, այդ թվում՝ բացակայած սովորողի, փոխադրման, ավարտման գործընթաց	**N 12 ստուգաթերթ** Սովորողի, այդ թվում՝ բացակայած սովորողի, փոխադրման, ավարտման գործընթաց **N 14 ստուգաթերթ** Վճարովի ծառայություններ	**N 12 ստուգաթերթ** Սովորողի, այդ թվում՝ բացակայած սովորողի, փոխադրման, ավարտման գործընթաց	**N 12 ստուգաթերթ** Սովորողի, այդ թվում՝ բացակայած սովորողի, փոխադրման, ավարտման գործընթաց **N 14 ստուգաթերթ** Վճարովի ծառայություններ **N 15 ստուգաթերթ** Օլիմպիադայի կազմակերպում և անցկացում
Կրթական գործընթացի իրականացման ռիսկայնության միջինացված միավորներ			
4,2	**3,8**	**3,9**	**4,8**

Համեմատելով ստուգումների արդյունքների միջինացված միավորները՝ կարող ենք նշել, որ՝

- տնօրենին ներկայացվող պահանջների կատարումը **38** դպրոցների միջինացված ռիսկային միավորի համեմատ **պակաս ռիսկային է** ՀՀ Լոռու մարզի, **ավելի բարձր ռիսկային**՝ ՀՀ Կոտայքի մարզի ստուգված դպրոցներում,

- 38 դպրոցների դեպքում և ՀՀ Լոռու մարզի դպրոցներում օլիմպիադայի կազմակերպման և անցկացման գործընթացին ուղղված N 15 ստուգաթերթը 2-րդն է միջինացված միավորների շարքում,

- բոլոր դեպքերում ստուգված դպրոցներում սահմանված կարգով է իրականացվել սովորողի, այդ թվում՝ բացակայած սովորողի, փոխադրման, ավարտման գործընթացները, քանի որ՝ ըստ N 12 ստուգաթերթի, խախտում չի արձանագրվել,

- կրթական գործընթացի իրականացումը 38 դպրոցների միջինացված միավորների համեմատ **ցածր ռիսկային է** ՀՀ Շիրակի, ապա ՀՀ Լոռու մարզերի ստուգված դպրոցներում, **ավելի ռիսկային՝** ՀՀ Կոտայքի մարզի ստուգված դպրոցներում:

2022 թվականի 2-րդ եռամսյակում ստուգված **38** դպրոցներից **16-ը (42%)** տեսչական մարմնի կողմից ստուգվել են նաև նախորդող տարիներին. **4-ը՝ նաև** 2018, **12-ը՝** 2019 թվականներին:

Համեմատելով ստուգումների արդյունքում ձևավորված դպրոցների ռիսկային միավորները՝ ստացվել է հետևյալ պատկերը (Գծապատկեր 4)՝



Վերոգրյալից հետևում է, որ նախորդ ստուգման արդյունքում **16** դպրոցների ձևավորված ռիսկային միավորները **2022 թվականի** ստուգման արդյունքում նախորդ ռիսկային միավորի համեմատ՝

- **նվազել են՝ 10** դպրոցներում **(63%).** Գավառի հ. 1, Արթիկի հ. 4, Իջևանի հ. 4, Հրազդանի հ. 11 հիմնական, Ջերմուկի հ. 3, Գյումրու հ. 27, Աղավնաձորի, Քարագլխի, Հայկավանի միջնակարգ դպրոցներ, Գյումրու «Օյունջյան» վարժարան**,**
- **աճել են 3 (19%).** իսկ Գյումրու հ. 38 հիմնական, Ուջանի, Մալիշկայի միջնակարգ դպրոցներ,
- **մնացել է նույնը՝ 1 (6%).** Իջևանի հ. 3 հիմնական դպրոց,
- **ռիսկային միավորը զրոյացել է 2 (12%)** դպրոցներում, Մալիշկայի հ. 1, Արմավիրի միջնակարգ դպրոցներ:

3. Խախտումների բնույթները՝ ըստ ստուգումների արդյունքում կազմված ակտերի և լիազոր մարմինների ղեկավարներին ներկայացված գրություններում նշված խախտումների

2022 թվականի 2-րդ եռամսյակում 38 դպրոցների ստուգումների արդյունքում արձանագրվել են ինչպես նույնաբնույթ, այնպես էլ տարաբնույթ խախտումներ: Արձանագրված խախտումների բնույթները, ըստ խախտումների տեսակների և դպրոցների, ներկայացվել են ստորև.

❖ ***Լիազոր մարմնի լիազորություններ. 4 (11%) դպրոցներում՝ 4 (1%) խախտում.***

-ուսուցչի մրցույթի ընթացակարգ,
-տնօրենի պաշտոնակատարի նշանակում,
- խորհրդի կազմի համապատասխանություն.

➢ Ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթը չի կայացել, հիմք ընդունելով լիազոր մարմնի գրությունը, որտեղ նշված պատճառները ստուգման արդյունքում պարզվել է, որ հիմնավոր չեն եղել.

- ***Արթիկի հ. 4 հիմնական դպրոց,***

➢ տնօրենի բացակայության ընթացքում լիազոր մարմնի կողմից տնօրենի պաշտոնակատար չի նշանակվել.

- ***Իջևանի հ.հ. 3, 4 հիմնական դպրոցներ,***

➢ դպրոցի խորհրդի կազմում համայնքի ղեկավարի ներկայացված անդամների թիվը չի համապատասխանում սահմանված կարգին.

- ***Ջերմուկի հ. 3 միջնակարգ դպրոց:***

❖ ***Կանոնադրություն. 34 (89%) դպրոցներում՝ 34 (10%) խախտում.***

- օրենսդրական փոփոխությունների ամրագրում Կանոնադրությունում

ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով կատարված փոփոխությունները չեն ամրագրվել **34** դպրոցների կանոնադրությունների մեջ: Նշված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով լիազոր մարմնի ղեկավարներին ներկայացվել են առաջարկություններ համապատասխան փոփոխությունների՝ դպրոցի կանոնադրության մեջ ամրագրման և սահմանված կարգով հաստատման ապահովման վերաբերյալ.

• ***Գառնիի հ. 1, Գավառի հ. 1, Ճամբարակի հ. 1, Իջևանի հ.հ. 3, 4, Արթիկի հ. 4, Աբովյանի հ. 10, Վանաձորի հ.հ. 20, 23, 27, Գյումրու հ. 9, 25, 38, Լեռնահովիտի հիմնական, Մարալիկի հ. 1, Քասախի հ. 2, Ջերմուկի հ. 3, Գյումրու հ. 27, Նոր Արտամետի, Աղավնաձորի, Մալիշկայի, Խաչաղբյուրի, Հայկավանի, Ձորակապի, Սարամեջի, Շնողի, Կաթնառատի, Լեջանի, Աշոցքի միջնակարգ, Հրազդանի հ. 13, Սիսիանի ավագ դպրոցներ, Էօրնեկեան հանրակրթական դպրոց, Օյունջյանի, Վանաձորի վարժարաններ (բացառություն՝ Հրազդանի հ. 11 հիմնական, Ուջանի, Քարագլխի, Արմավիրի միջնակարգ դպրոցներ):***

❖ ***Ներքին գնահատման գործընթաց. 11 (29%) դպրոցներում՝ 26 (8%) խախտում.***

- իրականացում,
- ներկայացում կառավարման և խորհրդակցական մարմիններին,
- հրապարակում

Արձանագրված խախտումները վերաբերել են ներքին գնահատման գործընթացի իրականացմանը և (կամ) համապատասխան մարմիններին ներկայացմանը, հրապարակմանը:

Ստուգումների արդյունքում պարզվել է, որ **11** դպրոցներից **7-ը (64%)** չեն իրականացրել ներքին գնահատում, այսինքն ստուգված դպրոցների գրեթե մեկ հինգերորդը **(18%)** իր կողմից վարչական և մանկավարժական աշխատողների, սովորողների և ծնողների մասնակցությամբ չի իրականացրել դպրոցի գործունեության վերլուծություն, հետևաբար չի իրականացրել նաև հաջորդող գործառույթները՝ ներկայացում կառավարման և խորհրդակցական մարմնիններին, հրապարակում:

Ներքին գնահատման գործընթացի խախտումներ արձանագրվել են ներքոնշյալ **11** դպրոցներում.

• ***Նոր Արտամետի միջնակարգ դպրոց*** *(իրականացում, ներկայացում կառավարման և խորհրդակցական մարմիններին),*

• ***Հայկավանի միջնակարգ դպրոց*** *(ներկայացում կառավարման և խորհրդակցական մարմիններին, հրապարակում),*

• ***Շնողի միջնակարգ դպրոց*** *(իրականացում, ներկայացում կառավարման և խորհրդակցական մարմիններին, հրապարակում),*

• ***Կաթնառատի միջնակարգ դպրոց*** *(իրականացում),*

• ***Լեռնահովիտի հիմնական դպրոց*** *(իրականացում, ներկայացում կառավարման և խորհրդակցական մարմիններին, հրապարակում),*

• ***Իջևանի հ. 3 հիմնական դպրոց*** *(իրականացում, ներկայացում կառավարման և խորհրդակցական մարմիններին),*

• ***Գառնիի հ. 1 հիմնական դպրոց*** *(ներկայացում կառավարման մարմնին),*

• ***Սարամեջի միջնակարգ դպրոց*** *(ներկայացում խորհրդակցական մարմիններին),*

• ***Գյումրու հ. 25 հիմնական դպրոց*** *(ներկայացում խորհրդակցական մարմիններին, հրապարակում),*

• ***Գյումրու հ. 38 հիմնական դպրոց*** *(իրականացում),*

• ***Աշոցքի միջնակարգ դպրոց*** *(իրականացում, ներկայացում կառավարման և խորհրդակցական մարմիններին):*

Նշված **բոլոր 26** խախտումները համարվել ժամկետանց **(100%)**, քանի որ ներքին գնահատման իրականացման, կառավարման և խորհրդակցական մարմիններին ներկայացման, հրապարակման ժամկետներն արդեն իսկ ավարտված են:

❖ ***Պաշտոնային պարտականությունների կատարում. 11 (29%) դպրոցներում՝ 44 (13%) խախտում.***

- տնօրենի պաշտոնային պարտականություններ,
- մանկավարժական աշխատողների պաշտոնային պարտականություններ

➢ **Տնօրենի պաշտոնային պարտականությունների** կատարման խախտումներ արձանագրվել են **բոլոր 11** դպրոցներում **(100%)՝ 34 (77%)** խախտում:

Խախտումները վերաբերել են դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների (այսուհետ՝ ՄՀ ծառայություններ), այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (այսուհետ՝ ԿԱՊԿՈՒ) սովորողների կազմի ներկայացմանը խորհրդին (**7** դպրոցները), տնօրենի տեղակալների աշխատանքների բաշխման իրականացմանը, մանկավարժական խորհրդի ներկայացմամբ՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի, տնօրենի տեղակալների, մանկավարժական աշխատողների հաշվետվությունների հաստատմանը, դպրոցի ուսուցչի մրցույթի կարգի, ներքին կարգապահական, աշխատողների վարքագծի կանոնների, ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվության ներկայացմանը խորհրդին, ինչպես նաև սովորողների ծնողների և դպրոցի միջև կնքված վճարովի հիմունքներով իրականացված լրացուցիչ կրթության վերաբերյալ պայմանագրերի առկայությանը.

• ***Աղավնածորի միջնակարգ դպրոց*** *(մեթոդական միավորման ղեկավարի ընտրություն, աշխատանքի բաշխում),*

• ***Գառնիի հ. 1 հիմնական դպրոց*** *(դպրոցական մակարդակում ՄՀ ծառայությունների, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ սովորողների կազմի ներկայացում խորհրդին),*

• ***Ճամբարակի հ. 1 հիմնական դպրոց*** *(տնօրենի տեղակալների աշխատանքների բաշխման իրականացում, մանկավարժական խորհրդի ներկայացմամբ՝ տնօրենի տեղակալների հաշվետվությունների հաստատում, ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվության, դպրոցական մակարդակում ՄՀ ծառայությունների, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ սովորողների կազմի ներկայացում խորհրդին),*

• ***Հայկավանի միջնակարգ դպրոց*** *(մեթոդական միավորման ղեկավարի ընտրություն, աշխատանքի բաշխում),*

• ***Շնողի միջնակարգ դպրոց*** *(դպրոցի ուսուցչի մրցույթի կարգի, ներքին կարգապահական, աշխատողների վարքագծի կանոնների ներկայացում խորհրդին, սովորողների ծնողների և դպրոցի միջև կնքված վճարովի հիմունքներով իրականացված լրացուցիչ կրթության վերաբերյալ պայմանագրերի առկայություն),*

• ***Սարամեջի միջնակարգ դպրոց*** *(դպրոցի ուսուցչի մրցույթի կարգի, դպրոցական մակարդակում ՄՀ ծառայությունների, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ սովորողների կազմի ներկայացում խորհրդին),*

• ***Լեջանի միջնակարգ դպրոց*** *(մանկավարժական խորհրդի ներկայացմամբ՝ դասղեկների հաշվետվությունների հաստատում, դպրոցական մակարդակում ՄՀ ծառայությունների, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ սովորողների կազմի ներկայացում խորհրդին),*

• ***Սիսիանի ավագ դպրոց*** *(ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվության ներկայացում խորհրդին),*

• ***Լեռնահովիտի հիմնական դպրոց*** *(մանկավարժական խորհրդի ներկայացմամբ ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հաստատում, ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվության, դպրոցական մակարդակում ՄՀ ծառայությունների, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ սովորողների կազմի ներկայացում խորհրդին),*

• ***Իջևանի հ. 3 հիմնական դպրոց*** *(դպրոցի ուսուցչի մրցույթի կարգի, ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվության, դպրոցական մակարդակում ՄՀ ծառայությունների, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ սովորողների կազմի ներկայացում խորհրդին),*

• ***Գյումրու հ. 27 միջնակարգ դպրոց*** *(դպրոցական մակարդակում ՄՀ ծառայությունների, այդ թվում ԿԱՊԿՈՒ սովորողների կազմի, դպրոցի ուսուցչի մրցույթի կարգի, ներքին կարգապահական կանոնների ներկայացում կառավարման մարմնին):*

➢ **Մանկավարժական աշխատողների պաշտոնային պարտականությունների կատարման** խախտումներ արձանագրվել են **4 (36%)** դպրոցներում՝ **10 (23%)** խախտում: Խախտումները վերաբերել են մեթոդմիավորման նախագահի, սոցիալական մանկավարժի, զինղեկի, գրադարանավարի, ուսուցչի օգնականի, հոգեբանի, դասղեկի պաշտոնային պարտականությունների կատարմանը.

• ***Աղավնաձորի միջնակարգ դպրոց*** *(սոցիալական մանկավարժ՝ սովորողների մասնագիտական կողմնորոշման բացահայտման մասնակցություն),*

• ***Ճամբարակի հ. 1 հիմնական դպրոց*** *(մեթոդմիավորումների նախագահների, գրադարանավարի, ուսուցչի օգնականների, հոգեբանի հաշվետվությունների առկայություն, դասղեկ՝ մանկավարժական խորհրդի քննարկմանը սովորողներին կարգապահական տույժի ներկայացում, գրադարանավար՝ սովորողներին աջակցում),*

• ***Սարամեջի միջնակարգ դպրոց*** *(զինղեկ և ուսուցչի օգնական մեթոդական միավորումների աշխատանքներին մասնակցություն),*

• ***Իջևանի հ. 3 հիմնական դպրոց*** *(ուսուցչի օգնականի մեթոդական միավորումների աշխատանքներին մասնակցություն):*

Հատկանշական է այն հանգամանքը, որ Ճամբարակի հ. 1 հիմնական դպրոցի դասղեկները և դասվարները մանկավարժական խորհրդի քննարկմանը չեն ներկայացրել սովորողներին՝ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը, ընդ որում կարգապահական տույժը՝ «նկատողություն» կիրառվել է նաև՝ 3-րդ դասարանի սովորողների նկատմամբ:

Սահմանված պահանջների համաձայն դպրոցի ներքին կարգապահական կանոնները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում օրենքով ու կանոնադրությամբ սահմանված կարգով կարգապահական տույժերը կարող են կիրառվել միայն միջին և ավագ դպրոցների սովորողների նկատմամբ, ինչպես նաև սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու համար մանկավարժական խորհուրդը պետք է մինչ այդ կայացնի համապատասխան որոշում:

Հարկ է նշել, որ **11** դպրոցներից **4-ում (36%)** արձանագրվել են ինչպես տնօրենի, այնպես էլ մանկավարժական աշխատողների պաշտոնային պարտականությունների ոչ պատշաճ կատարման վերաբերյալ խախտումներ (Ճամբարակի հ. 1, Իջևանի հ. 3 հիմնական, Աղավնաձորի, Սարամեջի միջնակարգ դպրոցներ):

Արձանագրված **44** խախտումներից **26-ը (59%)** համարվել են ժամկետանց, քանի որ թվարկված խախտումների գերակշռող մասը կատարվել է նախորդող ուսումնական տարիներին:

❖ ***Վարչական աշխատողների ուսումնական ծանրաբեռնվածություն. 4 (11%) դպրոցներում՝ 5 (2%) խախտում.***

- ուսումնական ծանրաբեռնվածության համապատասխանություն

Արձանագրված խախտումները վերաբերել են տնօրենի, տնօրենի տեղակալների ուսումնական ծանրաբեռնվածության անհամապատասխանությանը.

- ***Քասախի հ. 2 միջնակարգ դպրոց*** *(տնօրենի ծանրաբեռնվածություն),*
- ***Հայկավանի միջնակարգ դպրոց*** *(տնօրեն, տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ ուսումնական ծանրաբեռնվածություն),*
- ***Գյումրու հ. 38 հիմնական դպրոց*** *(տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի ծանրաբեռնվածություն),*
- ***Աշոցքի միջնակարգ դպրոց*** *(տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի ծանրաբեռնվածություն):*

Արձանագրված **5** խախտումներից **4-ը (80%)** ժամկետանց են, քանի որ կատարվել են նախորդող ուսումնական տարիներին:

❖ ***Ուսուցչի մրցույթի ընթացակարգ. 5 (13%) դպրոցներում՝ 11 (3%) խախտում.***

- մրցույթի հայտարարման ժամկետ,
- հանձնաժողովի ձևավորում

Ուսուցչի մրցույթի ընթացակարգի խախտումների գերակշիռ մասը վերաբերել են մրցութային հանձնաժողովների ձևավորմանը՝ **4** դպրոցներում **(80%)՝ 9 (82%)** խախտում. հանձնաժողովներում համապատասխան մասնախմբի ղեկավարի փոխարեն ընդգրկվել է դպրոցի ուսուցիչ, քանի որ դպրոցում առարկայական մեթոդական միավորումներ ձևավորված չեն եղել, այլ դպրոցից ուսուցիչ չի ընդգրկվել, հանձնաժողովի անվանական կազմը հաստատվել է մինչև այլ դպրոցից ուսուցչի առաջադրումը, հանձնաժողովի կազմում ընդգրկվել է համալսարանի ռեկտորը՝ որպես նախագահ, տնօրենը՝ որպես անդամ:

- ***Գառնիի հ. 1 հիմնական դպրոց*** *(հանձնաժողովի ձևավորում),*
- ***Հայկավանի միջնակարգ դպրոց*** *(մրցույթի մասին հայտարարության ժամկետ, հանձնաժողովի ձևավորում),*
- ***Շնողի միջնակարգ դպրոց*** *(հանձնաժողովի անվանական կազմի հաստատում),*
- ***Լեջանի միջնակարգ դպրոց*** *(հանձնաժողովի ձևավորում),*

• ***Վանաձորի վարժարան*** *(հանձնաժողովի ձևավորում):*

Ուսուցչի մրցույթի ընթացակարգին վերաբերող բոլոր **11 (100%)** խախտումները ժամկետանց են, հետևաբար հանձնարարականներ չեն տրվել:

❖ ***Կադրեր. մանկավարժական աշխատողների նշանակում. 22 (58%) դպրոցներում՝ 72 (22%) խախտում.***

- ուսուցիչ,
- մինչև մրցույթ,
- մրցույթի հաղթող,
- առանց մրցույթ, ներառյալ՝ ոչ մասնագետ,
- ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ,
- հատուկ մանկավարժ, սոցիալական մանկավարժ, հոգեբան, գրադարանավար, ուսուցչի օգնական

Մանկավարժական աշխատողների նշանակման խախտումներ արձանագրվել են ստուգված **38** դպրոցներից **22-ում *(58%):***

Մանկավարժական աշխատողների նշանակման խախտումներ չեն արձանագրվել հետևյալ **16 (42%)** դպրոցներում՝ Գավառի հ. 1, Վանաձորի հ.հ. 20, 23, 27 հիմնական, Մարալիկի հ. 1, Ջերմուկի հ. 3, Գյումրու հ. 27 Աղավնաձորի, Խաչաղբյուրի, Աշոցքի, Արմավիրի, Ձորակապի, Կաթնառատի միջնակարգ, Սիսիանի, Հրազդանի հ. 13 ավագ դպրոցներներ, Վանաձորի վարժարան:

Հարկ է նշել, որ, ըստ ստուգաթերթերի տեղեկատվական հարցերի տվյալների ամփոփման՝ Ձորակապի, Կաթնառատի միջնակարգ և Սիսիանի ավագ դպրոցներում նախորդ և ընթացիկ ուսումնական տարիներին ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ չի անցկացվել:

Միայն մանկավարժական աշխատողների նշանակման խախտումներ արձանագրվել են Աբովյանի հ. 10 հիմնական, Քարագլխի միջնակարգ դպրոցների և Օյունջյան վարժարանի ստուգման արդյունքում:

Արձանագրված **72** խախտումները, որոնք կազմել են խախտումների ընդհանուր թվի մեկ հինգերորդը (**22%),** վերաբերել են **48** մանկավարժական աշխատողների նշանակմանը:

Խախտումների և մանկավարժական աշխատողների թվային տվյալների անհամապատասխանությունը կապված է հետևյալ հանգամանքների հետ. նույն անձը խախտումով նշանակվել է որպես ժամանակավորապես փոխարինող ուսուցիչ, այնուհետև՝ որպես հիմնական, կամ նշանակվել է առանց մրցույթ՝ չունենալով նաև՝ անհրաժեշտ որակավորումը, կամ խախտումով նշանակվել է 1-ից ավելի առարկաների ուսուցիչ, կամ խախտումով նշանակվել է ուսուցիչ մինչև մրցույթ, այնուհետև՝ որպես մրցույթի հաղթող, կամ խախտումով նշանակվել է որպես ուսուցչի օգնական, այնուհետև խախտումով՝ որպես հատուկ մանկավարժ:

Մանկավարժական աշխատողների նշանակման խախտումների գերակշիռ մասը՝ **76%-ը (55** խախտում), վերաբերել է ուսուցչի, իսկ **24%-ը (17** խախտում)՝ այլ մանկավարժական աշխատողների նշանակմանը: Սահմանված պահանջների խախտումներով նշանակված **48** մանկավարժական աշխատողներից **37-ը (77%)՝** ուսուցիչներն են (փոխարինող ուսուցիչ, մինչև մրցույթ, մրցույթի հաղթող, առանց

մրցույթ, ներառյալ նաև՝ ոչ մասնագետ), իսկ **11-ը (23%)՝** այլ մանկավարժական աշխատողներ (ՄԿԱ, հատուկ մանկավարժ, սոցիալական մանկավարժ, հոգեբան, գրադարանավար, ուսուցչի օգնական):

Մանկավարժական աշխատողների նշանակման տոկոսային համամասնությունը՝ ըստ խախտումների թվի և մանկավարժական աշխատողների պաշտոնների ներկայացված է Գծապատկեր 5-ում:



Մանկավարժական աշխատողների նշանակման խախտումներին վերաբերող տեղեկատվությունը՝ ըստ դպրոցների, ներկայացված է Աղյուսակ 8-ում.

Աղյուսակ 8

Հ/Հ	Դպրոցի անվանում	Խախտումների թիվ	Մանկավարժական աշխատողների թիվ	Խախտման տեսակը
1	Քասախի հ. 2 մ/դ	6	5	Մինչև մրցույթ
2	Նոր Արտամետի մ/դ	2	1	Մինչև մրցույթ
3	Մալիշկայի մ/դ	2	1	Մինչև մրցույթ, մրցույթի հաղթող
4	Հրազդանի հ. 11 հ/դ	6	4	Առանց մրցույթ, ուսուցչի օգնական,
5	Գառնիի հ. 1 հ/դ	2	2	Ուսուցիչ, մինչև մրցույթ
6	Ճամբարակի հ. 1 հ/դ	1	1	Ուսուցչի օգնական
7	Աբովյանի հ. 10 հ/դ	2	1	Մինչև մրցույթ, մրցույթի հաղթող
8	Հայկավանի մ/դ	4	2	Առանց մրցույթ՝ ոչ մասնագետ
9	Շնողի մ/դ	2	2	Մինչև մրցույթ
10	Ուջանի մ/դ	6	3	Ուսուցիչ, մինչև մրցույթ, գրադարանավար
11	Սարամեջի մ/դ	1	1	Ուսուցիչ
12	Արթիկի հ. 4 հ/դ	1	1	Ուսուցիչ
13	Օյունջյան վարժարան	2	1	Մինչև մրցույթ, մրցույթի հաղթող
14	Լեջանի մ/դ	4	4	Ուսուցիչ, մինչև մրցույթ
15	Քարագլխի մ/դ	3	2	Ուսուցչի օգնական, հատուկ մանկավարժ
16	Լեռնահովիտի հ/դ	2	1	Ուսուցիչ
17	Իջևան հ. 4 հ/դ	1	1	Մինչև մրցույթ

18	*Իջևան հ. 3 հ/դ*	*4*	*2*	*Ուսուցիչ, մինչև մրցույթ, մրցույթի հաղթող, ուսուցչի օգնական*
19	*Գյումրու հ. 9 հ/դ*	*9*	*4*	*Սոցիալական մանկավարժ, մինչև մրցույթ, ուսուցչի օգնական*
20	*Գյումրու հ. 25 հ/դ*	*2*	*2*	*ՄԿԱ, ուսուցչի օգնական*
21	*Գյումրու հ. 38 հ/դ*	*7*	*5*	*Ուսուցիչ, առանց մրցույթ, հոգեբան*
22	*Էօրնեկեան վարժարան*	*3*	*2*	*Ուսուցիչ*
Ընդամենը		*72*	*48*	

Աղյուսակի տվյալներից հետևում է, որ առավել մեծ թվով մանկավարժական աշխատողների նշանակման խախտումներ արձանագրվել են Գյումրու հ. 38 հիմնական և Քասախի հ. 2 միջնակարգ դպրոցներում՝ **5-ական** մանկավարժական աշխատողներ, իսկ առավել մեծ թվով նշանակման խախտումներ՝ Գյումրու հ. 9 հիմնական դպրոցում՝ **9** խախտում:

Մանկավարժական աշխատողների նշանակման **72** խախտումներից ժամկետանց են համարվել **52-ը (72%).** քանի որ խախտումների մեծ մասի հետևանքները վերացնել արդեն իսկ հնարավոր չէ. ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատվածում լրացել է մանկավարժական աշխատողի պահանջվող աշխատանքային ստաժը, փոխարինել է ժամանակավորապես, նշանակել է մինչև մրցույթ, ազատվել է աշխատանքից:

❖ ***Խորհրդակցական մարմինների ձևավորում և գործունեություն. 16 (42%) դպրոցներում՝ 46 (14%) խախտում.***

- մանկավարժական խորհրդի ձևավորում և գործունեություն,
- մեթոդական միավորումների ձևավորում և գործունեություն,
- աշակերտական խորհրդի ձևավորում,
- ծնողական խորհրդի ձևավորում և գործունեություն

– **Մանկավարժական խորհրդի ձևավորում և գործունեություն**. **10 (62,5%)** դպրոցներում՝ **19 (42%)** խախտումներ.

Խախտումների գերկշիռ մասը վերաբերել է մանկավարժական խորհրդի գործունեությանը. դպրոցի խորհրդի անդամի առաջադրում, նիստերի պարբերականություն, ԿԱՊԿՈՒ սովորողների անհատական ուսուցման պլանների (այսուհետ՝ ԱՈՒՊ) քննարկում և այլն:

Հատկանշական է այն հանգամանքը, որ, եթե մի շարք դեպքերում դպրոցների մանկավարժական խորհուրդները պատշաճ չեն իրականացրել իրենց վերապահված լիազորությունները (նաև՝ ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերի քննարկում, դպրոցական բաղադրիչի բաշխում, 120-200 դասաժամ բացակայություն ունեցող սովորողների համար լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների ժամանակացույցի որոշում), ապա որոշ դեպքերում՝ վերազանցել են իրենց լիազորությունները.

- Գյումրու հ. 25 հիմնական դպրոցի մանկավարժական խորհուրդը կայացրել է որոշում սովորողին երկրից բացակայելու պատճառով դպրոցից ազատման

վերաբերյալ, որի հետևանքով չի ապահովվել նաև՝ սովորողի միջնակարգ կրթության պարտադիր լինելու պահանջը,

- Ձորակապի միջնակարգ դպրոցի մանկավարժական խորհուրդը՝ 2-րդ դասարանի սովորողին թողել է նույն դասարանում՝ դասընթացը կրկնելու, հիմք ընդունելով ծնողի դիմումը, իսկ Գյումրու հ. 38 հիմնական դպրոցինը՝ որոշում է կայացրել լրացուցիչ քննությունների և ստուգողական աշխատանքների արդյունքում 3-ական առարկաներից անբավարար գնահատված սովորողներից մեկին հաջորդ դասարան փոխադրելու (առանց վերաքննություններ հանձնելու), իսկ մյուսին՝ դասընթացը կրկնելու վերաբերյալ, որի հետևանքով չի ապահովվել նաև՝ սովորողների կրթության հաջորդականության սկզբունքը:

Մանկավարժական խորհրդի ձևավորմանը և գործունեությանը վերաբերող խախտում ունեցող դպրոցները՝ ըստ խախտումների, ներկայացվել են ստորև.

- ***Քասախի հ. 2 միջնակարգ դպրոց*** *(խորհրդի անդամի առաջադրում),*
- ***Հրազդանի հ. 11 հիմնական դպրոց՝*** *(ձևավորում),*
- ***Ճամբարակի հ. 1 հիմնական դպրոց՝*** *(խորհրդի անդամի առաջադրում, նիստերի պարբերականություն),*
- ***Արթիկի հ. 4 հիմնական դպրոց*** *(ԱՈՒՊ-ի քննարկում),*
- ***Լեջանի միջնակարգ դպրոց*** *(ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերի քննարկում),*
- ***Իջևանի հ. 3 հիմնական դպրոց*** *(120-200 դասաժամ բացակայություն ունեցող սովորողների համար լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների ժամանակացույցի որոշում),*
- ***Գյումրու հ. 25 հիմնական դպրոց*** *(քարտուղարի ընտրություն, երկրից բացակայելու պատճառով սովորողի դպրոցից ազատման որոշման կայացում),*
- ***Գյումրու հ. 38 հիմնական*** *դպրոց (լրացուցիչ քննությունների և ստուգողական աշխատանքների արդյունքում 3-ական առարկաներից անբավարար գնահատված սովորողներից մեկի հաջորդ դասարան փոխադրելու, իսկ մյուսին՝ դասընթացը կրկնելու վերաբերյալ որոշման կայացում, մանկավարժական խորհրդի անվանական կազմի գրանցում մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում, ԱՈՒՊ-ի քննարկում, դպրոցական բաղադրիչի բաշխում),*
- ***Աշոցքի միջնակարգ դպրոց*** *(նիստերի պարբերականություն),*
- ***Ձորակապի միջնակարգ դպրոց*** *(նույն դասարանի դասընթացի կրկնում ծնողի դիմումի հիման վրա):*

Ըստ արձանագրված խախտումների՝ մի դեպքում տնօրենը մանկավարժական խորհրդի ներկայացմամբ չի հաստատել տնօրենի տեղակալների, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների ու մանկավարժների հաշվետվությունները, իսկ որոշ դեպքերում՝ մանկավարժական աշխատողներն ընդհանրապես չեն ունեցել հաշվետվություններ:

- **Մեթոդական միավորումներ՝ ձևավորում և գործունեություն. 10 (62,5%)** դպրոցներում **24 (52%)** խախտում.

Մեթոդական միավորումների գործունեությանը վերաբերող խախտումների հիմնական մասը վերբերել են ԿԱՊԿՈՒ սովորողների ԱՈՒՊ-ների քննարկմանը (7 դպրոց), դասաժամերի նախնական բաշխմանը (5 դպրոց), դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինմանը և այլն:

- ***Աղավնաձորի միջնակարգ դպրոց*** *(ձևավորում),*

• ***Գառնիի հ. 1 հիմնական դպրոց*** *(դասաժամերի նախնական բաշխում, դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինում, ԱՈՒՊ-ների քննարկում),*

• ***Հայկավանի միջնակարգ դպրոց*** *(ձևավորում),*

• ***Շնողի միջնակարգ դպրոց*** *(դասաժամերի նախնական բաշխում),*

• ***Սարամեջի միջնակարգ դպրոց*** *(դասաժամերի նախնական բաշխում, դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինում, ԱՈՒՊ-ների քննարկում),*

• ***Լեջանի միջնակարգ դպրոց*** *(ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների, ԱՈՒՊ-ների քննարկում, խորհրդակցությունների, ընթերցումների կազմակերպում),*

• ***Լեռնահովիտի հիմնական դպրոց*** *(ձևավորում, դասաժամերի նախնական բաշխում, նիստերի պարբերականություն, ԱՈՒՊ-ների քննարկում),*

• ***Իջևանի հ. 3 հիմնական դպրոց*** *(դպրոցական բաղադրիչի տնօրինում, ԱՈՒՊ-ների քննարկում),*

• ***Գյումրու հ. 38 հիմնական դպրոց*** *(ԱՈՒՊ-ների քննարկում),*

• ***Ճամբարակի հ. 1 հիմնական դպրոց*** *(դասաժամերի նախնական բաշխում, դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինում, ԱՈՒՊ-ների քննարկում):*

➢ **Աշակերտական խորհրդի ձևավորում. 1 (6%)** դպրոցում **1 (2%)** խախտում.

• ***Լեռնահովիտի հիմնական դպրոց*** *(չի ձևավորվել):*

➢ **Ծնողական խորհրդի ձևավորում և գործունեություն. 1 (6%)** դպրոցում **2 (4%)** խախտում.

• ***Ճամբարակի հ. 1 հիմնական դպրոց*** *(ձևավորում, խորհրդի անդամի առաջադրում):*

Արձանագրված խախտումների վերլուծությունից հետևում է, որ որոշ դեպքերում դպրոցներում չեն ձևավորվել մեթոդական միավորումներ (ներառյալ՝ տարրական կրթության), աշակերտական խորհուրդ, իսկ կրթության ոլորտի օրենսդրության պահանջների համաձայն՝ խորհրդակցական մարմինները ստեղծվում են դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով:

Խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը վերաբերող խախտումների ամփոփումից հետևում է, որ մի շարք դպրոցներում արձանագրվել են միաժամանակ 1-ից ավելի խորհրդակցական մարմնիններին վերաբերող խախտումներ. Ճամբարակի հ. 1 հիմնական դպրոցում արձանագրվել են և՛ մանկավարժական, և՛ մեթոդական միավորումների, և՛ ծնողական խորհուրդների, Գյումրու հ. 38, Իջևանի հ. 3 հիմնական և Լեջանի միջնակարգ դպրոցներում՝ մանկավարժական խորհրդի և մեթոդական միավորումների, Լեռնահովիտի հիմնական դպրոցում՝ մեթոդական միավորումների և աշակերտական խորհրդի ձևավորմանը և գործունեությանը վերաբերող խախտումներ:

Խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը վերաբերող **46** խախտումներից ժամկետանց են համարվել **31-ը (67%):** Ժամկետանց խախտումները վերաբերել են մանկավարժական խորհրդի կողմից սովորողների դասարանից դասարան փոխադրման, 120-200 դասաժամ բացակայություն ունեցող սովորողների համար սահմանված գործընթացների վերաբերյալ համապատասխան որոշումների կայացմանը, մանկավարժական խորհրդի և մեթոդական միավորումների կողմից՝ նիստերի պարբերականությանը, հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերի, ԿԱՊԿՈՒ սովորողների ԱՈՒՊ-ների քննարկմանը, մեթոդական միավորումների կողմից ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխմանը և այլն:

❖ ***Ուսումնական պլանի պահանջներ. 14 (37%) դպրոցներում՝ 22 (7%) խախտում.***

- առարկայի դասավանդում,
- առարկայական ծրագրի ժամաքանակի անհամապատասխանություն,
- սովորողների ուսումնական բեռնվածություն,
- այլ

Ուսումնական պլանի պահանջների խախտումները վերաբերել են առարկայի չդասավանդմանը, առարկայական ծրագրի ժամաքանակի, ինպես նաև 12-րդ դասարանի (ներառյալ՝ 2-րդ կիսամյակում) սովորողների շաբաթական բեռնվածության անհամապատասխանությանը, սահմանվածից պակաս քանակով առարկաների ուսումնասիրությանը (ենթահոսքերում), արտադասարանական ինքնուրույն գործունեության տեսակների համար սահմանված դասաժամերի չհատկացմանը, սովորողների կողմից չընտրված առարկաների ուսումնասիրությանը.

➢ **Առարկայի դասավանդում. 14** դպրոցներից **4-ում (29%)՝ 6 (27%)** խախտում (6 առարկա).

- ***Խաչաղբյուրի միջնակարգ դպրոց*** *(«Գերմաներեն»),*
- ***Ճամբարակի հ. 1 հիմնական դպրոց*** *(«Ազգային երգ ու պար»),*
- ***Գավառի հ. 1 հիմնական դպրոց*** *(«Կյանքի հմտություններ»)*
- ***Լեռնահովիտի հիմնական դպրոց (****«Ինֆորմատիկա», «Կենսաբանություն», «Մաթեմատիկա»):*

➢ **Առարկայական ծրագրի ժամաքանակի անհամապատասխանություն. 11 (79%)** դպրոցներում՝ **12 (55%)** խախտում (4 առարկա).

- ***Մալիշկայի միջնակարգ դպրոց (****«Անգլերեն»՝ որպես երրորդ օտար լեզու, «Ազգային երգ ու պար»),*
- ***Հրազդանի հ. 13 ավագ դպրոց*** *(«Ձեռնարկատիրական կրթություն»),*
- ***Հրազդանի հ. 11 հիմնական դպրոց*** *(«Անգլերեն»՝ որպես երրորդ օտար լեզու),*
- ***Խաչաղբյուրի միջնակարգ դպրոց*** *(«Ձեռնարկատիրական կրթություն»),*
- ***Ճամբարակի հ. 1 հիմնական դպրոց*** *(«Ազգային երգ ու պար»),*
- ***Հայկավանի միջնակարգ դպրոց (*** *«Երկրաչափություն»),*
- ***Շնողի միջնակարգ դպրոց*** *(«Ձեռնարկատիրական կրթություն»),*
- ***Գյումրու հ. 27 միջնակարգ*** *(«Ձեռնարկատիրական կրթություն»),*
- ***Վանաձորի վարժարան*** *(«Ձեռնարկատիրական կրթություն»),*
- ***Ջերմուկի հ. 3 միջնակարգ դպրոց*** *(«Ձեռնարկատիրական կրթություն»),*
- ***Էօրնեկեան վարժարան*** *(«Ձեռնարկատիրական կրթություն»):*

➢ **Ուսումնական պլանի այլ պահանջներ. 3** դպրոցում **(21%)՝ 4** խախտում **(18%).**

- ***Մալիշկայի միջնակարգ դպրոց*** *(երկրորդ կիսամյակում 12-րդ դասարանի սովորողներն ունեցել են 22-27 դասաժամ շաբաթական բեռնվածություն),*
- ***Շնողի միջնակարգ դպրոց*** *(12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում սովորողին չեն հատկացվել արտադասարանական ինքնուրույն գործունեության տեսակների համար սահմանված 3 դասաժամը: Ըստ 2021-2022 ուստարվա 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակի ուսումնական պլանի՝ «Ֆիզկուլտուրա» առարկային հատկացվել է 2 դասաժամ, մինչդեռ 12-րդ դասարանի սովորողները չեն ընտրել վերոնշյալ առարկան),*
- ***Սիսիանի ավագ դպրոց*** *(տնտեսագիտական ենթահոսքում բնագիտական 3 առարկայի փոխարեն ուսումնասիրել են 2-ը):*

Վերոգրյալից հետևում է, որ Ճամբարակի հ. 1 հիմնական, Մալիշկայի, Շնողի և Խաչաղբյուրի միջնակարգ դպրոցներում միաժամանակ արձանագրվել են ուսումնական պլանի 1-ից ավելի պահանջների խախտումներ:

Ստուգված **38** դպրոցներից **11-ում (29%),** գրեթե մեկ երրորդում արաձանագրվել են առարկայական ծրագրի ժամաքանակի անհամապատասխանության վերաբերյալ խախտումներ, որի գերակշռող մասը վերաբերել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված «Ձեռնարկատիրական կրթություն» առարկային:

Ուսումնական պլանի պահանջների խախտումներից հետևում է, որ այդ դպրոցներում կրթության գործընթացը չի կարգավորվել օրինակելի ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով, դպրոցի տնօրենը ուսումնական պլանին համապատասխան չի ապահովել կրթական ծրագրերի իրականացումը, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը պատասխանատու չի եղել դպրոցում ուսումնական ծրագրերի կատարման համար, իսկ ուսուցիչները չեն ապահովել տվյալ առարկայի կրթական ծրագրի կատարումը՝ խախտելով կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջների կատարումը:

Ուսումնական պլանի պահանջների **22** խախտումներից ժամկետանց են համարվել **20-ը (91%),** քանի որ կատարվել են նախորդող ուսումնական տարիներին. առարկայի ուսումնասիրում, առարկայական ծրագրի ժամաքանակի անհամապատասխանություն, ուսումնական բեռնվածություն:

❖ ***Կրթության կազմակերպում. 8 (21%) դպրոցներում՝ 14 (4%) խախտում.***

- արտերկրից ընդունված սովորողների կրթության,
- ԿԱՊԿՈՒ սովորողների ուսուցման,
120-200 դասաժամ բացակայություն ունեցող սովորողների համար
լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների կազմակերպում,
- կիսամյակային և տարեկան գնահատում

Կրթության կազմակերպման վերաբերյալ արձանագրված խախտումները վերաբերել են 120-200 դասաժամ բացակայություն ունեցող սովորողների լրացուցիչ քննությունների և ստուգողական աշխատանքների կազմակերպման, ներառյալ՝ կիսամյակային և տարեկան գնահատման գործընթացին, որոնք արձանագրվել են **4 (50%)** դպրոցներում, արտերկրից դպրոց ընդունված սովորողներին հանրակրթության մեջ ընդգրկելու նպատակով առարկայական մասնագետների խմբի ստեղծման և նրա համապատասխան գործառույթների իրականացմանը, վկայագրված ԿԱՊԿՈՒ սովորողների համար ԱՈՒՊ-ների կազմմանը և նրա հիման վրա ուսուցման կազմակերպմանը, 12-րդ դասարանում «Ֆիզկուլտուրա» առարկայի ստուգարքի տասը միավորային համակարգով գնահատմանը.

- ***Գառնիի հ. 1 հիմնական դպրոց*** *(120-200 դասաժամ բացակայություն ունեցող սովորողների համար լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների կազմակերպում),*
- ***Իջևանի հ. 3 հիմնական դպրոց*** *(120-200 դասաժամ բացակայություն ունեցող սովորողների համար ամփոփիչ ստուգողական աշխատանքների կազմակերպում),*

• ***Գյումրու հ. 25 հիմնական դպրոց*** *(120-200 ժամ բացակայություն ունեցող սովորողների համար ամփոփիչ ստուգողական աշխատանքների անցկացում ուսումնական պլանով սահմանված ոչ բոլոր առարկաներից, գործընթացի կազմակերպման ժամկետ, կիսամյակային գնահատում),*

• ***Գյումրու հ. 38 հիմնական դպրոց*** *(որևէ կիսամյակում կամ տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայություն ունեցող սովորողների կիսամյակային և տարեկան գնահատման իրականացում լրացուցիչ քննությունների և ստուգողական աշխատանքների գնահատականների հիման վրա),*

• ***Վանաձորի հ. 27 հիմնական դպրոց*** *(առարկայական մասնագետների խմբի ստեղծում, մասնագիտական խմբի գործառույթների իրականացում),*

• ***Գյումրու հ. 27 միջնակարգ դպրոց*** *(առարկայական մասնագետների խմբի ստեղծում, մասնագիտական խմբի գործառույթների իրականացում),*

• ***Ճամբարակի հ. 1 հիմնական դպրոց*** *(ԿԱՊԿՈՒ սովորողների համար ԱՈՒՊ-ի կազմում, ԱՈՒՊ-ի հիման վրա ուսուցման կազմակերում),*

• ***Սարամեջի միջնակարգ դպրոց*** *(12-րդ դասարանում «Ֆիզկուլտուրա» առարկայի ստուգարքի գնահատում տասը միավորային համակարգով):*

Ստուգման արդյունքների վերլուծությունից հետևում է, որ 120-200 դասաժամ բացակայություն ունեցող սովորողներին վերաբերող խախտումները կատարվել են նախորդող ուսումնական տարիներին (բացառությամբ՝ 2021-2022 ուսումնական տարվա):

Հիմք ընդունելով կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության մի շարք նոր պահանջների ուժի մեջ մտնելը՝ կարելի է ակնկալել, որ 120-200 դասաժամ բացակայություն ունեցող սովորողների կրթության կազմակերպմանը վերաբերող խախտումները կսկսեն նվազել:

Գործող օրենսդրության պահանջների համաձայն պարտադիր կրթությունից դուրս մնացած դպրոցահասակ երեխաների բացահայտումը և ուղղորդումը (կրթության մեջ ներառումը) վերաբերում է նաև՝ որևէ ուսումնական հաստատությունում հաշվառված, սակայն վեց աշխատանքային օր անընդմեջ կամ ամսվա մեջ ավելի քան 10 օր չհաճախած (չհաճախող) 6-18 տարեկան սովորողներին: Նշված սովորողների համար տվյալ հաստատությունը պարտավոր է մեկօրյա ժամկետում ձեռնարկել մի շարք գործողություններ. ճշտել պատճառները և այլն (ուժի մեջ է մտել 2021 թվականի փետրվարի 13-ից): Այս պահանջն արդեն իսկ ակնկալում է, որ ձեռնարկված միջոցները շատ դեպքերում կկանխեն սովորողի երկար ժամանակահատվածով բացակայություններ ունենալուն:

Ի լրումն վերոգրյալին՝ կրթության շարունակականության սկզբունքը ապահովելու նպատակով դպրոցը (նաև՝ հեռավար ուսուցման կենտրոնը) կարող է կազմակերպել հեռավար ուսուցում. դիվանագիտական աշխատանքի անցած ծնողների (օրինական ներկայացուցիչների) երեխաների, կամ օտարերկրյա պետություններում ծնողների (օրինական ներկայացուցիչների) հետ ժամանակավոր գտնվող երեխաների համար, այն երեխաների համար, որոնք ունեն առկա ուսուցումն անհնարին դարձնող երկարատև բուժման կարիք, կամ այն երեխաների համար, որոնք առարկայական կամ սպորտային միջազգային օլիմպիադաների կամ մրցաշարերի մասնակիցներ են և հաճախ են բացակայում երկրից (ուժի մեջ է մտել 2020 թվականի հունիսի 15-ից):

Նշված **14** խախտումներից ժամկետանց են համարվել **12-ը (86%),** բացառություն են կազմել միայն վկայագրված ԿԱՊԿՈՒ սովորողների համար ԱՈՒՊ-ների կազմմանը

և նրա հիման վրա ուսուցման կազմակերպմանը վերաբերող խախտումները, որոնց հետևանքները վերացնելու նպատակով տրվել են հանձնարարականներ:

❖ *Օլիմպիադայի գործընթաց. 11 (29%) դպրոցներում՝ 21 (6%) խախտում.*

- իրականացում,
- օլիմպիադայի անցկացման ժամկետների պահպանում,
- կազմկոմիտեի, առարկայական հանձնաժողովների ձևավորում և գործառույթների իրականացում,
- սահմանված դասարանների սովորողների ընդգրկում,
- հաղթողների խրախուսում

Արձանագրված խախտումների գերակշռող մասը վերաբերել է օլիմպիադայի դպրոցական փուլը նախապատրաստելու և անցկացնելու նպատակով առարկայական հանձնաժողովների և կազմկոմիտեի ձևավորմանը: Արձանագրվել են նաև խախտումներ, որոնք վերաբերել են նրանց կողմից վերապահված գործառույթների չկատարմանը կամ նրանց գործառույթների իրականացմանը՝ համապատասխան առարկայական մեթոդական միավորումների կողմից. Շնողի միջնակարգ դպրոցում՝ կազմկոմիտեի (դպրոցական փուլի անցկացման ժամկետների սահմանում, նախապատրաստում, կազմակերպում, վերահսկում, հաղթողներին տարածքային փուլին մասնակցության, խրախուսման ներկայացում) և Գյումրու հ. 9 հիմնական դպրոցում՝ առարկայական հանձնաժողովների գործառույթները (դպրոցական փուլի անցկացում, հաղթողների որոշում, կազմկոմիտեին երաշխավորության և առաջարկության ներկայացում տարածքային փուլին մասնակցող թիմերի կազմի մասին):

Լեջանի միջնակարգ դպրոցում չեն պահպանվել օլիմպիադայի անցկացման ժամկետները, Ճամբարակի հ. 1 հիմնական դպրոցում առկա չեն սովորողների օլիմպիադաների ընթացքում կատարած գրավոր աշխատանքները, իսկ Ձորակապի միջնակարգ դպրոցի «Մաթեմատիկա» առարկայի օլիմպիադային մասնակցել են նաև 5-րդ դասարանի սովորողներ:

Կաթնառատի միջնակարգ դպրոցում 2 ուսումնական տարի չեն կազմակերպվել դպրոցական օլիմպիադաներ. չեն իրականացվել օլիմպիադաների կազմակերպման և անցկացման հետ կապված գործընթացները:

Հարկ է նշել, որ օլիմպիադաների կազմակերպման նպատակներից են տաղանդավոր, շնորհալի և ստեղծագործական կարողություն ունեցող երեխաների հայտնաբերումը և նրանց հետ անհատական աշխատանքի կազմակերպումը, ուսումնական առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրությունների զարգացումը և այդ առարկաներից խոր ու կայուն գիտելիքներ ստանալուն նպաստելը:

Օլիմպիադայի դպրոցական փուլի կազմակերպման և անցկացման պահանջների խախտումներ ունեցող 11 դպրոցները ներկայացվել են ստորև.

- ***Գառնիի հ. 1 հիմնական դպրոց*** *(կազմկոմիտեի հաստատում),*
- ***Ճամբարակի հ. 1 հիմնական դպրոց*** *(առարկայական հանձնաժողովների, կազմկոմիտեի ձևավորում, ընթացակարգի հիմքերի առկայություն),*

• ***Ձորակապի միջնակարգ դպրոց*** *(առարկայական հանձնաժողովների, կազմկոմիտեի ձևավորում, 5-րդ դասարանի սովորողների մասնակցություն),*

• ***Շնողի միջնակարգ դպրոց*** *(կազմկոմիտեի ձևավորում),*

• ***Ուջանի միջնակարգ դպրոց*** *(կազմկոմիտեի, առարկայական հանձնաժողովների ձևավորում),*

• ***Սարամեջի միջնակարգ դպրոց*** *(կազմկոմիտեի, առարկայական հանձնաժողովների ձևավորում, գործառույթներ),*

• ***Կաթնառատի միջնակարգ դպրոց*** *(իրականացում),*

• ***Լեջանի միջնակարգ դպրոց*** *(ժամկետ, խրախուսում),*

• ***Իջևան հ. 4 հիմնական դպրոց*** *(առարկայական հանձնաժողովների ձևավորում),*

• ***Իջևանի հ. 3 հիմնական դպրոց*** *(կազմկոմիտեի ձևավորում, գործառույթներ),*

• ***Գյումրու հ. 9 հիմնական դպրոց*** *(առարկայական հանձնաժողովների ձևավորում):*

Արձանագրված **21** խախտումներից ժամկետանց են համարվել **20-ը (95%),** քանի որ խախտման հետևանքներն արդեն իսկ վերացնել հնարավոր չէ: Բացառություն է կազմել միայն Լեջանի միջնակարգ դպրոցում օլիմպիադայի դպրոցական փուլի հաղթողներին դպրոցի տնօրինության կողմից (ստուգմամբ ընդգրկված ժամանակահատվածում) չխրախուսելու վերաբերյալ խախտումը, որի հետևանքը վերացնելու նպատակով տեսչական մարմնի ղեկավարի համապատասխան կարգադրագրով տրվել է հանձնարարական:

❖ ***Սովորողների համակազմի ձևավորում 15 (39%) դպրոցներում՝ 27 (8%) խախտում***

- դպրոց սովորողի ընդունման և (կամ) ազատման դիմումների առկայություն,
- սովորողի հանրակրթության հաջորդականության սկզբունքի,
- դասարանում սովորողների խտության համապատասխանության,
- լիցենզիայով սահմանված սովորողների թվի համապատասխանության,
- միջնակարգ կրթության պարտադիր լինելու պահանջի ապահովում

Սովորողների համակազմի ձևավորման խախտումները վերաբերել են դպրոց սովորողի ընդունման և (կամ) ազատման դիմումների առկայությանը, սովորողների հանրակրթության հաջորդականության սկզբունքի, միջնակարգ կրթության պարտադիր լինելու պահանջի, դասարանում սովորողների խտության, ինչպես նաև լիցենզիայով սահմանված սովորողների թվի համապատասխանության ապահովմանը:

Սովորողների համակազմի ձևավորման խախտում ունեցող **15** դպրոցներից **7-ում (47%)** արձանագրված խախտումները վերաբերել են սովորողի կրթության հաջորդականության սկզբունքի ապահովմանը. ՌԴ-ից վերադարձած սովորողները համապատասխան փաստաթղթերի առկայության պարագայում ընդգրկվել են սահմանվածից 1 դասարան բարձր, Ճամբարակի հ. 1 հիմնական դպրոցում սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկումը կազմակերպվել է սովորողի տարիքային խմբից 3 դասարան ցածր, Սիսիանի ավագ դպրոցում՝ 200 դասաժամից ավել բացակայություն ունեցող սովորողները փոխադրվել են հաջորդ դասարան:

Նույն քանակով՝ **7 (47%),** դպրոցներում արձանագրված խախտումները վերաբերել են դպրոցի սովորողների համակազմի սահմանային տեղերի գերազանցմանը:

Որոշ դեպքերում սովորողների դպրոց ընդունելությունը և (կամ) ազատումը չի իրականացվել ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա. առկա չի եղել դիմումը, կամ այն ներկայացվել է սովորողի քրոջ կողմից, իսկ Սարամեջի միջնակարգ դպրոցում 11-րդ դասարանի սովորողն ազատվել է դպրոցից իր դիմումի հիման վրա և չի շարունակել կրթությունը որևէ այլ ուսումնական հաստատությունում՝ որի հետևանքով չի ապահովվել նաև՝ միջնակարգ ընդհանուր կրթության պարտադիր լինելու պահանջը:

- ***Քասախի հ. 2 միջնակարգ դպրոց*** *(սահմանային տեղերի գերազանցում, դասարանների խտություն),*
- ***Մալիշկայի միջնակարգ դպրոց*** *(կրթության հաջորդականություն),*
- ***Հրազդանի հ. 11 հիմնական դպրոց*** *(կրթության հաջորդականություն),*
- ***Գառնիի հ. 1 հիմնական դպրոց*** *(սահմանային տեղերի գերազանցում, կրթության հաջորդականություն, ընդունման և ազատման դիմումներ՝ ներկայացված ոչ ծնողի կողմից),*
- ***Ճամբարակի հ. 1 հիմնական դպրոց*** *(կրթության հաջորդականություն),*
- ***Շնողի միջնակարգ դպրոց*** *(սահմանային տեղերի գերազանցում),*
- ***Ուջանի միջնակարգ դպրոց*** *(կրթության հաջորդականություն),*
- ***Սարամեջի միջնակարգ դպրոց*** *(սահմանային տեղերի գերազանցում, ազատման դիմումի առկայություն, պարտադիր կրթություն),*
- ***Սիսիանի ավագ դպրոց*** *(սահմանային տեղերի գերազանցում, 200 դասաժամից ավել բացակայություն ունեցող սովորողների դասարանից դասարան փոխադրում՝ կրթության հաջորդականություն),*
- ***Իջևանի հ. 3 հիմնական դպրոց*** *(սովորողների ընդունելության դիմումների առկայություն),*
- ***Վանաձորի հ. 20 հիմնական դպրոց*** *(սահմանային տեղերի գերազանցում),*
- ***Վանաձորի հ. 27 հիմնական դպրոց*** *(դասարանի խտություն),*
- ***Գյումրու հ. 25 հիմնական դպրոց*** *(ազատման դիմումի առկայություն, պարտադիր կրթություն),*
- ***Էօրնեկեան հանրակրթական դպրոց*** *(սահմանային տեղերի գերազանցում),*
- ***Աշոցքի միջնակարգ դպրոց*** *(կրթության հաջորդականություն):*

Արձանագրված **27** խախտումներից ժամկետանց են համարվել **24-ը (89%),** քանի որ նրանց հետևանքները վերացնել հնարավոր չէ, հետևաբար հանձնարարականներ չեն տրվել. խախտումները կատարվել են նախորդող ուսումնական տարիներին, իսկ սովորողների սահմանային տեղերի գերազանցում ունեցող դպրոցների մի մասին հանձնարարական չի տրվելնաև այն պատճառով, որ նրանք տվյալ բնակավայրերում գործող միակ հաստատություններն են: Սահմանված կարգի պահանջների համաձայն բոլոր այն բնակավայրերում, որտեղ հաստատությունը տվյալ կրթական աստիճանում կրթություն իրականացնող միակ պետական հաստատությունն է կամ տվյալ համայնքում գործող պետական հաստատություններում տվյալ կրթական աստիճանի համար լիցենզիայով տրված բոլոր տեղերը զբաղված են, սովորողի ընդունելությունը հաստատություն իրականացվում է՝ անկախ լիցենզիայով տրված սահմանային տեղերի սահմանափակումից (ուժի մեջ է մտել 2022 թվականի փետրվարի 23-ից):

❖ **Այլ խախտում՝ 1 դպրոցում (3%)՝ 1 (0,3%) խախտում.**

Կառավարման խորհրդի գործունեություն.

• ***Գյումրու հ. 27 միջնակարգ դպրոց*** *(խորհրդի արձանագրությունների մատյանում նիստերի արձանագրություններ առկա չեն):*

4. Առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները և բաշխվածությունը՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի սփռված դպրոցների

Ինչպես արդեն նշվել է **2022 թվականի 2-րդ եռամսյակում** խախտումներ արձանագրվել են ստուգված **38** դպրոցներից **35-ում՝ 327** խախտում:

Աղյուսակ 9-ում ներկայացվել են առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները՝ ըստ դպրոցների (%) և խախտումների թվի (%).

Աղյուսակ 9

Հ/Հ	*Առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները*	*Դպրոցների թիվ (%)*	*Խախտումների թիվ (%)*
1	*Կանոնադրության անհամապատասխանություն*	*34 (89%)*	*34 (10%)*
2	*Կադրեր՝ մանկավարժական աշխատողների նշանակում*	*22 (58%)*	*72 (22%)*
3	*Խորհրդակցական մարմինների ձևավորում և գործունեություն*	*16 (42%)*	*46 (14%)*
4	*Սովորողների համակազմի ձևավորում*	*15 (39%)*	*27 (8%)*
5	*Ուսումնական պլանի պահանջներ*	*14 (37%)*	*22 (7%)*
6	*Ներքին գնահատման գործընթաց*	*11 (29%)*	*26 (8%)*
7	*Օլիմպիադայի գործընթաց*	*11 (29%)*	*21 (6%)*
8	*Պաշտոնային պարտականությունների կատարում*	*11 (29%)*	*44 (13%)*
9	*Այլ խախտումներ. լիազոր մարմնի լիազորություններ, կրթության կազմակերպում, ուսուցչի մրցույթի ընթացակարգ, վարչական աշխատողի ուսումնական ծանրաբեռնվածություն, կառավարման խորհրդի գործունեություն*		*35 (11%)*

Ելնելով վերոգրյալից՝

❖ **առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները՝ ըստ դպրոցների թվի (%) վերաբերել են՝**

- կանոնադրության անհամապատասխանությանը՝ **34 (89%),**
- մանկավարժական աշխատողների նշանակմանը՝ **22 (58%),**
- խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը՝ **16 (42%),**
- սովորողների համակազմի ձևավորմանը՝ **15 (39%),**
- ուսումնական պլանի պահանջների կատարմանը՝ **14 (37%),**
- պաշտոնային պարտականությունների կատարմանը և օլիմպիադայի, ներքին գնահատման գործընթացների իրականացմանը՝ **11-ական (29%) դպրոցներում,**

❖ **առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները՝ ըստ խախտումների թվի (%), վերաբերել են՝**

- մանկավարժական աշխատողների նշանակմանը՝ **72 (22%),**
- խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը՝ **46 (14%),**
- պաշտոնային պարտականությունների կատարմանը՝ **44 (13%),**
- կանոնադրության անհամապատասխանությանը՝ **34 (10%),**

- սովորողների համակազմի ձևավորմանը՝ **27 (8%),**
- ներքին գնահատման գործընթացին՝ **26 (8%),**
- ուսումնական պլանի պահանջների կատարմանը՝ **22 (7%),**
- օլիմպիադայի գործընթացին՝ **21 (6%) խախտումներ:**

Ստուգման արդյունքների վերլուծությունից հետևում է, որ 2022 թվականի 2-րդ եռամսյակում ստուգված դպրոցների մոտ մեկ երրորդը պատշաճ չեն իրականացրել ներքին գնահատման և օլիմպիադայի գործընթացների իրականացումը, տնօրենը և մանկավարժական աշխատողները՝ իրենց պաշտոնային պարտականությունները, 37%-42%-ը՝ խորհրդակցական մարմինների ձևավորումը, գործունեությունը, սովորողների համակազմի ձևավորումը, ուսումնական պլանի պահանջների կատարումը, իսկ դպրոցների գերակշռող մասը (կեսից ավելին) չունի օրենսդրական փոփոխություններով ամրագրած կանոնադրություն, ինպես նաև սահմանված կարգով չի իրականացրել մանկավարժական աշխատողների նշանակումը:

Գծապատկեր 6-ում ներկայացվել են առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները՝ ըստ դպրոցների և խախտումների տոկոսային համամասնության.



Ինչպես արդեն նշվել է՝ 2022 թվականի 2-րդ եռամսյակում ստուգումներ իրականացվել են ՀՀ **38** դպրոցներում՝ ՀՀ Արագածոտնի մարզի **1,** ՀՀ Սյունիքի, Արմավիրի, Տավուշի մարզերի՝ **2-ական,** ՀՀ Վայոց ձորի մարզի՝ **3,** ՀՀ Գեղարքունիքի մարզի՝ **4,** ՀՀ Կոտայքի մարզի՝ **6,** ՀՀ Լոռու մարզի՝ **8 և** ՀՀ Շիրակի մարզի՝ **10 դպրոցներում:**

Առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները՝ ըստ ՀՀ մարզերի ստուգված դպրոցների, ունեն հետևյալ պատկերը (տես աղյուսակ 10).

Աղյուսակ 10

ՀՀ մարզեր (դպրոցների թիվ)	Առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները՝ ըստ խախտում կատարած դպրոցների տոկոսային թվի			
	Կադր	Խորհրդակցական մարմիններ	Պաշտոնային պարտականություններ	Կանոնադրություն
ՀՀ Արագածոտնի մարզ (1)	1 (100%)	-	-	-
ՀՀ Սյունիքի մարզ (2)	-	-	1 (50%)	2 (100%)
ՀՀ Արմավիրի մարզ (2)	1 (50%)	-	-	1 (50%)
ՀՀ Տավուշի մարզ (2)	2 (100%)	1 (50%)	1 (50%)	2 (100%)
ՀՀ Վայոց ձորի մարզ (3)	2 (67%)	1 (33%)	1 (33%)	2 (67%)
ՀՀ Գեղարքունիքի մարզ (4)	1 (25%)	2 (50%)	2 (50%)	4 (100%)
ՀՀ Կոտայքի մարզ (6)	5 (83%)	3 (50%)	1 (17%)	5 (83%)
ՀՀ Լոռու մարզ (8)	3 (37,5%)	3 (37,5%)	3 (37,5%)	8 (100%)
ՀՀ Շիրակի մարզ (10)	6 (60%)	6 (60%)	2 (20%)	10 (100%)

Աղյուսակ 10-ի տվյալներից հետևում է, որ

- մանկավարժական աշխատողների նշանակման խախտումներն առավելագույնն արձանագրվել են ՀՀ Արագածոտնի և Տավուշի մարզերում ստուգված **բոլոր** դպրոցներում՝ **100%,** խախտում չի արձանագրվել ՀՀ Սյունիքի մարզում,
- կանոնադրության անհամապատասխանության առավելագույն խախումները՝ ՀՀ Սյունիքի, Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերում ստուգված **բոլոր** դպրոցներում՝ **100%,** խախտում չի արձանագրվել ՀՀ Արագածոտնի մարզում,
- խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը վերաբերող խախտումներն առավելագույնը՝ ՀՀ Շիրակի մարզում ստուգված դպրոցների **60%-ում,** խախտում չի արձանագրվել ՀՀ Արագածոտնի, Սյունիքի և Արմավիրի մարզերում,
- պաշտոնային պարտականությունների կատարմանը վերաբերող խախտումներն առավելագույնն արձանագրվել են ՀՀ Սյունիքի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում ստուգված դպրոցների **50%-ում,** իսկ խախտում չի արձանագրվել՝ ՀՀ Արագածոտնի և Արմավիրի մարզերում:

Հաշվետվությունում արդեն իսկ նշվել է, որ արձանագրված **327** խախտումներից ժամկետանց են համարվել **222-ը,** որոնց գերակշռող մասը՝ ըստ բնույթների, վերաբերել է՝

- մանկավարժական աշխատողների նշանակմանը՝ **23%-ը** (52),
- խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը՝ **14%-ը** (31),
- ներքին գնահատման գործընթացին՝ **12%-ը** (26),
- պաշտոնային պարտականությունների կատարմանը՝ **12%-ը** (26),
- սովորողների համակազմի ձևավորմանը՝ **11%-ը** (24),
- ուսումնական պլանի պահանջներ կատարմանը՝ **11%-ը** (20),
- օլիմպիադայի ընթացակարգին՝ **10%-ը (**20 ժամկետանց խախտում):

Գծապատկեր 7-ում ներկայացվել է ժամկետանց խախտումների բնույթների տոկոսային հանմամասնությունը.



Խախտումների և ժամկետանց խախտումների թվային տվյալների համադրման արդյունքում պարզվել է, որ ուսուցչի մրցույթի ընթացակարգի և ներքին գնահատման գործընթացի բնույթների բոլոր խախտումները համարվել են ժամկետանց (**100%),** քանի որ նրանք ավարտվել են նախորդող ուսումնական տարիներին և խախտման հետևանքները վերացնել հնարավոր չէ:

5. Ընդհանուր տեղեկատվություն 2022 թվականի 2-րդ եռամսյակում ստուգված դպրոցներին տրված հանձնարարականների վերաբերյալ (բնույթները)

Ինչպես արդեն նշվել է՝ **2022 թվականի 2-րդ եռամսյակում** ստուգված (ամփոփված) **38** դպրոցներից խախտում չի արձանագրվել **3 (8%)՝** Վանաձորի հ. 23 հիմնական, Մարալիկի հ. 1 և Արմավիրի միջնակարգ դպրոցներում:

Խախտում ունեցող **35 (92%)** դպրոցներից հանձնարարական չի տրվել **15-ին (43%),** քանի որ այդ դպրոցներում արձանագրված խախտումների հետևանքներն արդեն իսկ վերացնել հնարավոր չէ. Գավառի հ. 1, Արթիկի հ. 4, Գյումրու հ. 9, Վանաձորի հ.հ. 23, 27, հիմնական, Ջերմուկի հ. 3, Գյումրու հ. 27, Խաչաղբյուրի, Ձորակապի, Կաթնառատի, Աշոցքի միջնակարգ, Հրազդանի հ. 13, Սիսիանի ավագ դպրոցներ, Օյունջյանի, Վանաձորի վարժարաններ:

Խախտումների հետևանքները վերացնելու նպատակով տեսչական մարմնի ղեկավարի համապատասխան կարգադրագրերով խախտում ունեցող **35** դպրոցներից **20-ին (57%)** տրվել են **62** հանձնարարականներ, որոնք կազմել են հայտնաբերված խախտումների **19%-ը**:

Առավել հաճախ կրկնվող հանձնարարականների բնույթները

❖ **Տնօրենի պաշտոնային պարտականությունների կատարման** հանձնարարականներ տրվել են **7 (35%)** դպրոցների՝ **19 (31%)** հանձնարարականներ, որոնք վերաբերել են տնօրենի տեղակալների աշխատանքի բաշխմանը, մեթոդական

միավորման ղեկավարի ընտրությանը, գրադարանավարի պաշտոնային պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացմանը, ուսուցչի օգնականի՝ առարկայական մեթոդական միավորումների աշխատանքներին մասնակցության ապահովմանը, ՄՀ աջակցության ծառայությունների, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ սովորողների կազմի, դպրոցի ուսուցչի մրցույթի կարգի, ներքին կարգապահական կանոնների՝ այդ թվում աշխատողների վարքագծի կանոնների ներկայացմանը խորհրդին, օլիմպիադայի դպրոցական փուլի հաղթողների խրախուսմանը:

Տնօրենի պաշտոնային պարտականությունների կատարման հանձնարարականներ տրվել են Գառնիի հ. 1, Ճամբարակի հ. 1, Իջևանի հ. 3 հիմնական, Աղավնաձորի, Շնողի, Սարամեջի և Լեջանի միջնակարգ դպրոցներին:

❖ **Մանկավարժական աշխատողների նշանակում. 12 (60%)** դպրոցների՝ **20 (32%)** հանձնարարականներ, որոնցից **15-ը (75%)՝** վերաբերել են ուսուցչի, իսկ **5-ը (25%)՝** այլ մանկավարժական աշխատողների նշանակմանը. հատուկ մանկավարժ, հոգեբան, գրադարանավար, ուսուցչի օգնական:

Մանկավարժական աշխատողների նշանակման հանձնարարականներ տրվել են Ճամբարակի հ. 1, Իջևան քաղաքի հ.հ. 3, 4, Աբովյանի հ. 10, Հրազդանի հ. 11, Գյումրու հ. 38, Լեռնահովիտի հիմնական, Քասախի հ. 2, Նոր Արտամետի, Ուջանի, Լեջանի և Քարագլխի միջնակարգ դպրոցներին:

❖ **Խորհրդակցական մարմինների ձևավորում և գործունեության իրականացում. 11 (55%)** դպրոցների՝ **15 (24%)** հանձնարարականներ, որոնք վերաբերել են մանկավարժական, աշակերտական խորհուրդների ձևավորմանը, մանկավարժական խորհրդի (քարտուղարի ընտրություն, նիստերի պարբերականություն, դպրոցի խորհրդի անդամի առաջադրում) և մեթոդական միավորումների (ձևավորում, ԿԱՊԿՈՒ սովորողների ԱՈՒՊ-ի քննարկում, խորհրդակցությունների, ընթերցումների կազմակերպում) գործունեությանը:

Վերոնշյալ հանձնարարականները տրվել են Գառնիի հ. 1, Ճամբարակի հ. 1, Իջևան քաղաքի հ. 3, Հրազդանի հ. 11, Գյումրու հ. 25, Լեռնահովիտի հիմնական, Քասախի հ. 2, Աղավնաձորի, Հայկավանի, Սարամեջի, Լեջանի միջնակարգ դպրոցների տնօրեններին.

❖ **Սովորողների համակազմի ձևավորում. 3 (15%)** դպրոցների՝ **3 (5%)** հանձնարարականներ, որոնք վերաբերել են լիցենզիայով սահմանված սովորողների սահմանային և դասարանի սովորողների թվերի խտության համապատասխանեցմանը: Գառնիի հ. 1, Վանաձորի հ. 20 հիմնական և Քասախի հ. 2 միջնակարգ դպրոցներ:

❖ **Ուսումնական պլանի պահանջների համապատասխանեցում և կրթության կազմակերպում. 1-ական (5%-ական)** դպրոցների՝ **2-ական (3%-ական)** հանձնարարականներ, որոնք 1-ի դեպքում վերաբերել են առարկայական ծրագրի ժամաքանակի համապատասխանեցմանը՝ Մալիշկայի միջնակարգ դպրոց, իսկ 2-րդի

դեպքում՝ ԿԱՊԿՈՒ սովորողների համար ԱՈՒՊ-ների կազմմանը և դրա հիման վրա ուսուցման կազմակերպմանը՝ Ճամբարակի հ. 1 հիմնական դպրոց:

❖ **Վարչական աշխատողի ուսումնական ծանրաբեռնվածության համապատասխանեցում՝ 1 (5%)** դպրոցի՝ **1 (2%)** հանձնարարական. Քասախի հ. 2 միջնակարգ դպրոց:

Վերոգրյալից հետևում է, որ առավել հաճախ կրկնվել են հետևյալ բնույթի խախտումները.

- տնօրենի պաշտոնային պարտականություններ. **7 (35%)** դպրոցների՝ **19 (31%),**
- մանկավարժական աշխատողների նշանակում. **12 (60%)** դպրոցների՝ **20 (32%)**
- խորհրդակցական մարմինների ձևավորում և գործունեության իրականացում. **11 (55%)** դպրոցների՝ **15 (24%)** հանձնարարականներ:

Գծապատկեր 8-ում ներկայացվել են առավել հաճախ կրկնվող հանձնարարականների բնույթները՝ ըստ դպրոցների և հանձնարարականների տոկոսային համամասնության.



6. Ընդհանուր տեղեկատվություն դպրոցներին տրված հանձնարարականների և 2022 թվականի 2-րդ եռամսյակում տնօրենների կողմից ներկայացված կատարողականների համադրման արդյունքների վերաբերյալ

2021 թվականի 2-րդ եռամսյակը, որպես հանձնարարականների կատարողականների ներկայացման ժամկետ, սահմանվել է **33** դպրոցներին տրված **123** հանձնարարականների համար:

33 դպրոցներից **26-ի (79%)** կողմից կատարողականները ներկայացվել են սահմանված ժամկետում, **7-ի (21%)** դեպքում՝ սահմանված ժամկետից ուշ:

Տրված **123** հանձնարարականներից **41-ը** վերաբերել են մանկավարժական աշխատողների նշանակմանը, **13-ը**՝ մեթոդմիավորումների գործունեությանը, **9-ը՝** ուսումնական պլանի պահանջների կատարմանը, **60-ը**՝ այլ բնույթի: Այլ բնույթի հանձնարարականները հիմնականում վերաբերել են մանկավարժական խորհրդի գործունեությանը, ուսումնական պլանի պահանջների կատարմանը, կանոնադրության համապատասխանեցմանը, լիցենզիայի ապահովմանը, լիցենզիայի սահմանային թվերի համապատասխանեցմանը, սովորողների համակազմի, աշակերտական խորհրդի ձևավորմանը և այլն:

Ամենամեծ թվով հանձնարարականները տրվել են Երևանի Ռուբեն Սարգսյանի «Էլիտա» հեղինակային ոչ պետական միջնակարգ դպրոցին՝ **123** հանձնարարականներից **11–ը (9%):**

Ըստ դպրոցներից ստացված կատարողականների՝ **123** հանձնարարականներից կատարվել են **85-ը (69%),** կատարվել են մասամբ՝ **22-ը (18%),** չեն կատարվել **16-ը (13%)**:

Հանձնարարականների և ստացված կատարողականների համադրման արդյունքները՝ ըստ դպրոցների, ներկայացված են Աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11

Հանձնարարականների և կատարողականների համադրման արդյունքներ՝ ըստ դպրոցների									
Հ/հ	*Դպրոցի անվանումը*	*Տնօրենին տրված կարգադրագիր*				*Տնօրենից ստացված կատարողական*			
		Կադրեր	*Մեթ/միավ գործ.*	*Ուսպլան*	*Այլ*	*Կադրեր*	*Մեթ/միավ գործ.*	*Ուսպլան*	*Այլ*
1	*Երևանի հ. 7 հ/դ*	*4*	-	-	*2*	*1+3**	-	-	*2*
2	*Երևանի հ. 8 հ/դ*	-	-	-	*7*	-	-	-	*4+3***
3	*Երևանի հ. 54 հ/դ*	-	-	*1*	-	-	-	*1*	-
4	*Երևանի հ. 78 հ/դ*	*1*	-	-	*1*	*1*	-	-	*1*
5	*Երևանի հ. 89 հ/դ*	-	*1*	-	-	-	*1*	-	-
6	*Երևանի հ. 128 հ/դ*	*3*	-	-	*2*	*2+1**	-	-	*2***
7	*«Էլիտա» ՍՊԸ*	-	-	*2*	*9*	-	-	*2*	*9*
8	*«Ռոբերտ Ազարյան» ՍՊԸ*	-	-	-	*2*	-	-	-	*2***
9	*Լուսառատի մ/դ*	*2*	-	*1*	-	*2*	-	*1**	-
10	*Հայանիստի մ դ*	*2*	-	-	-	*2*	-	-	-
11	*Տափերականի մ դ*	*1*	-	*3*	-	*1***	-	*1+2***	-
12	*Եղեգնավանի մ/դ*	*1*	-	*1*	*7*	*1**	-	*1**	*7*
13	*Հովտաշատի մ դ*	*1*	-	-	-	*1**	-	-	-
14	*Արևաբույրի մ/դ*	*1*	-	*1*	*1*	*1***	-	*1*	*1*
15	*Այգավանի մ/դ*	*1*	-	-	-	*1**	-	-	-
16	*Ջրարբիի մ/դ*	*4*	-	-	*1*	*4*	-	-	*1***
17	*Արևաշատի մ/դ*	*3*	-	-	-	*3**	-	-	-

18	Հայկաշենի մ/դ	-	-	-	1	-	-	-	1
19	Ալաշկերտի մ/դ	1	4	-	2	1	4	-	2
20	Ճամբարակի հ. 1 հ/դ	1	1	-	6	1*	1**	-	5+1*
21	Լեռնահովիտի հ/դ	2	1	-	1	2*	1	-	1
22	Շնողի մ/դ	-	-	-	3	-	-	-	3
23	Սարամեջի մ/դ	-	1	-	4	-	1		3+1**
24	Լեջանի մ/դ	1	2	-	3	1*	2	-	3
25	Քասախի հ. 2 մ/դ	3	-	-	3	3	-	-	2+1**
26	Նոր Արտամետի մ/դ	1	-	-	-	1	-	-	-
27	Հրազդանի հ. 11 հ/դ	3	-	-	1	2+1*	-	-	1
28	Գառնիի հ. 1 հ/դ	-	1	-	3	-	1	-	2+1*
29	Աբովյանի հ. 10 հ/դ	1	-	-	-	1*	-	-	-
30	Աղավնաձորի մ/դ	-	1	-	1	-	1	-	1
31	Քարագլխի մ/դ	1	-	-	-	1*	-	-	-
32	Հայկավանի մ/դ	-	1	-	-	-	1**	-	-
33	Ուջանի մ/դ	3	-	-	-	2+1*	-	-	-
Ընդամենը		41	13	9	60	21+18*+2**	11+2**	5+2*+2**	48+2*+10**
		123				85+22*+16**			

*Ծանոթություն՝ *մասամբ է կատարվել, ** չի կատարվել*

❖Մանկավարժական աշխատողների նշանակմանը վերաբերող **41 (33%)** հանձնարարականները տրվել են **33** դպրոցներից **22–ին (67%)**: Մանկավարժական աշխատողների նշանակման հանձնարարականների **76%-ը** (**31** հանձնարարական), վերաբերել է սահմանված կարգով ուսուցչի նշանակմանը:

Տրված **41** հանձնարարականներից կատարվել են **21-ը (51%)**, ընթացքի մեջ են **18-ը (44%)**, չեն կատարվել **2-ը (5%):**

Մանկավարժական աշխատողների նշանակման վերաբերյալ հանձնարարականների կատարումը՝ ըստ ներկայացված կատարողականի, «Ընթացքի մեջ է» համարվել հետևյալ դեպքերում.

- անձն ազատվել է աշխատանքից, սակայն թափուր տեղը կատարողականի ներկայացման պահին համալրված չի եղել,

- թափուր տեղի համար պարբերաբար հայտարարվող մրցույթները դեռևս չեն համալրվել:

❖ Մեթոդական միավորումների գործունեությանը վերաբերող **13** հանձնարարականները տրվել են **33** դպրոցներից **9–ին (21%)**:

Այդ հանձնարարականներից **11-ը (85%)** կատարվել են, **2-ը (15%)՝** չեն կատարվել:

❖ Ուսումնական պլանի պահանջների կատարմանը վերաբերող **9** հանձնարարականները տրվել են **33** դպրոցներից **6-ին (18%):**

Հանձնարարականներից **5-ը (56%)** կատարվել են, **2-ը (22%)**՝ ընթացքի մեջ են, ևս **2-ը (22%)՝** չեն կատարվել:

❖ Տնօրենի պաշտոնային պարտականություններին վերաբերող այլ բնույթի **60** հանձնարարականներ տրվել են **33** դպրոցներից **20–ին (61%)**:

Հանձնարարականներից **48-ը (80%)** կատարվել են, ընթացքի մեջ են՝ **2-ը (3%),** չեն կատարվել՝ **10-ը (17%)**:

Հարկ է նշել, որ չկատարված հանձնարարականները վերաբերել են դպրոցի կանոնադրության, վարչական աշխատողների ուսումնական ծանրաբեռնվածության համապատասխանեցմանը, սովորողների համակազմի, մեթոդական միավորումների ձևավորմանը:

«Ընթացքի մեջ» գտնվող **22** հանձնարարականներից **18-ը** վերաբերել են մանկավարժական աշխատողների նշանակումներին:

Կատարողականների համադրման արդյունքում իրականացվել է նշված դպրոցների ռիսկերի վերագնահատում՝ համաձայն ՀՀ կառավարության 22.08.2019թ. «Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» N 1153-Ն որոշման (այսուհետ՝ մեթոդաբանության կարգ) 40-44-րդ կետերի պահանջների:

Որոշ դեպքերում լիազոր մարմինների ղեկավարները տեսչական մարմնի ղեկավարին ուղղված պատասխան գրություններում ներկայացնում են խախտում կատարած դպրոցների տնօրենների բացատրությունները, որոշ դեպքերում նաև՝ իրենց հասցեագրված կատարողականները:

Տեսչական մարմնի ղեկավարի կարգադրագրերը տրվում են դպրոցների տնօրեններին, որտեղ հստակ նշված են, ոչ միայն հանձնարարականի կատարման, այլ նաև՝ **տեսչական մարմին տեղեկացման** ժամկետները:

Համաձայն մեթոդաբանության կարգի 40-րդ և 41-րդ կետերի պահանջների՝ դպրոցի ռիսկը վերագնահատվում է ստուգման արդյունքում տրված հանձնարարականի և դրա կատարման վերաբերյալ տեսչական մարմնում **դպրոցից ստացված գրությամբ ներկայացված տեղեկության** համադրման կամ հանձնարարականի կատարման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների հիման վրա: Եթե դպրոցում իրականացված ստուգման արդյունքում տեսչական մարմնի ղեկավարի կարգադրագրով տրված հանձնարարականը կատարվել է ամբողջությամբ, ապա ուսումնական հաստատության ռիսկը գնահատվում է **0 միավոր**: Եթե նշված հանձնարարականը կատարվել է մասամբ և սահմանված ժամկետում, ապա ուսումնական հաստատության ռիսկը գնահատվում է **3 միավոր**: Եթե հանձնարարականը կատարվել է մասամբ և սահմանված ժամկետից ուշ՝ **6 միավոր**: Հանձնարարականի կատարման վերաբերյալ **գրություն չներկայացվելու դեպքում** դպրոցի ռիսկը գնահատվում է՝ **8 միավոր,** իսկ **հանձնարարականը չկատարվելու դեպքում՝** առավելագույնը՝ **10 միավոր**:

7. Տեղեկատվություն ստուգումների արդյունքում արձանագրված կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ

Ստուգումների արդյունքում արձանագրվել են «Կրթության մասին» և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև կրթության ոլորտը կարգավորող **10** նորմատիվ իրավական ակտերի **118** պահանջների խախտումներ, որոնք, ըստ դպրոցների, ներկայացվել են Աղյուսակ 12-ում.

Աղյուսակ 12

Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ	Դպրոցի անվանումը
«Կրթության մասին» ՀՀ օրենք	
14-րդ հոդվածի 2-րդ մաս. *«Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության գործընթացը կարգավորվում է օրինակելի ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով: Դրանք մշակում և հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը»:*	***Խաչաղբյուրի մ/դ, Հայկավանի մ/դ, Հրազդանի հ. 13 ա/դ, Մալիշկայի մ/դ, Շնողի մ/դ, Էօրնեկեան հանրակրթական դպրոց, Վանաձորի վարժարան, Ջերմուկի հ. 3 մ/դ***
«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք	
4-րդ հոդվածի 4-րդ մաս. *«Միջնակարգ կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:*	***Սարամեջի մ/դ***
5-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ. *«Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին»:*	***Գառնիի հ. 1 հ/դ, Ձորակապի մ/դ, Ճամբարակի հ. 1 հ/դ, Մալիշկայի մ/դ, Ուջանի մ/դ, Սիսիանի ա/դ, Աշոցքի մ/դ***
9-րդ հոդվածի 6-րդ մաս. *«Ոչ պետական ուսումնական հաստատության կանոնադրությունը չպետք է հակասի «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն օրենքի դրույթներին»:*	***Էօրնեկեան հանրակրթական դպրոց***
12-րդ հոդվածի 18-րդ մասի 1-ին կետ. *«Պետական ուսումնական հաստատության տնօրենը խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական հաստատության ... արտաքին և ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանք»:*	***Գառնիի հ. 1 հ/դ, Հայկավանի մ/դ, Նոր Արտամետի մ/դ, Շնողի մ/դ, Լեռնահովիտի հ/դ, Կաթնառատի մ/դ, Աշոցքի մ/դ***
14-րդ հոդվածի 3-րդ մաս. *«Հանրակրթական պետական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունն իր ուսումնական պլանները կազմում է օրինակելի ուսումնական պլանների հիման վրա: Օրինակելի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով նախատեսված ժամաքանակը ուսումնական հաստատությունը բաշխում է պետական բաղադրիչով սահմանված կամ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած առարկաներին»:*	***Հայկավանի մ/դ, Հրազդանի հ. 11 հ/դ, Մալիշկայի մ/դ, Շնողի մ/դ, Սիսիանի ա/դ, Վանաձորի վարժարան***
16-րդ հոդվածի 1-ին մաս. *« Սովորողների ընդունելությունը ուսումնական հաստատություն իրականացվում է տնօրենի հրամանով՝ դպրոցահասակ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի (այսուհետ՝ ծնող) դիմումի և հաստատության ու ծնողի միջև կնքված պայմանագրի հիման վրա....»:*	***Գառնիի հ. 1 հ/դ, Իջևանի հ. 3 հ/դ***

16-րդ հոդվածի 7-րդ մաս. *«Սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով» :*	***Ուջանի մ/դ***
16-րդ հոդվածի 8-րդ մաս. *«Ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելը և ազատելը կատարվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած կարգով հետևյալ դեպքերում. 1) ծնողի դիմումի հիման վրա. 2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա»:*	***Գառնիի հ. 1 հ/դ,*** ***Սարամեջի մ/դ,*** ***Գյումրու հ. 25 հ/դ***
24-րդ հոդվածի 3-րդ մաս. *«Պետական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում այն համալրվում է մրցութային հիմունքներով՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած մրցույթի օրինակելի կարգի և ուսումնական հաստատության կանոնադրության...»:*	***Հայկավանի մ/դ,*** ***Հրազդանի 11 հ/դ,*** ***Գյումրու հ. 38 հ/դ***
25-րդ հոդվածի 4-րդ մաս. *«Պետական ուսումնական հաստատության մեկ դրույքով պաշտոնավարող վարչական աշխատողը համապատասխան որակավորման դեպքում համատեղության կարգով կարող է ունենալ շաբաթական մինչև ութ դասաժամ ուսումնական ծանրաբեռնվածություն»:*	***Հայկավանի մ/դ,*** ***Աշոցքի մ/դ,*** ***Գյումրու հ. 38 հ/դ,*** ***Քասախի հ. 2 մ/դ***
26-րդ հոդվածի 1-ին մաս. *«Ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ»:*	***Էօրնեկեան հանրակրթական դպրոց***
34-րդ հոդվածի 2-րդ մաս. *«Ներքին գնահատումն իրականացվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը: Ներքին գնահատմանը մասնակցում են վարչական և մանկավարժական աշխատողները, սովորողները և ծնողները»:*	***Նոր Արտամետի մ/դ,*** ***Շնողի մ/դ,*** ***Իջևանի հ. 3 հ/դ,*** ***Լեռնահովիտի հ/դ,*** ***Կաթնառատի մ/դ,*** ***Աշոցքի մ/դ,*** ***Գյումրու հ. 38 հ/դ***
34-րդ հոդվածի 3-րդ մաս. *«Ներքին գնահատման հաշվետվությունը տնօրենը մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 5-ը ներկայացնում է ուսումնական հաստատության խորհրդին, ծնողական, աշակերտական և այլ գործող խորհուրդներին, ինչպես նաև ապահովում դրա հրապարակումը»:*	***Հայկավանի մ/դ,*** ***Նոր Արտամետի մ/դ,*** ***Շնողի մ/դ,*** ***Իջևանի հ. 3 հ/դ,*** ***Լեռնահովիտի հ/դ,*** ***Կաթնառատի մ/դ,*** ***Գառնիի հ. 1 հ/դ,*** ***Գյումրու հ. 25 հ/դ,*** ***Աշոցքի մ/դ,*** ***Սարամեջի մ/դ***
ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշմամբ հաստատված հավելված 4. «Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկի և նկարագրեր»	
3-րդ գլխի 1-ին կետի 1-ին ենթակետ. *«Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը՝ պատասխանատու է*	***Գավառի հ. 1 հ/դ,*** ***Խաչաղբյուրի մ/դ,*** ***Հայկավանի մ/դ,***

հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի կատարման, դասավանդման որակի և սովորողների՝ կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն մակարդակի և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող աշխատողներին մեթոդական շարունակական օժանդակության ապահովման համար»:	***Հրազդանի հ. 13 ա/դ, Ճամբարակի հ. 1 հ/դ, Շնողի մ/դ, Մալիշկայի մ/դ, Էօրնեկեան հանրակրթական դպրոց, Վանաձորի վարժարան, Ջերմուկի հ. 3 մ/դ***
***3-րդ գլխի 1-ին կետի 2-րդ ենթակետ**. «Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը՝ կանոնակարգում է սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը»:*	***Մալիշկայի մ/դ***
***3-րդ գլխի 1-ին կետի 5-րդ ենթակետ. «**Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը՝ ղեկավարում է առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները»:*	***Հայկավանի մ/դ, Աղավնաձորի մ/դ***
***3-րդ գլխի 1-ին կետի 5.2-րդ ենթակետ** «Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը .... 5.2) պատասխանատու է դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման և անհատական ուսուցման պլանի (այսուհետ՝ ԱՈՒՊ) մշակման, իրականացման և գնահատման համար»:*	***Ճամբարակի հ. 1 հ/դ***
4-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ. «**Տնօրենի՝ հանրակրթական ուսումնական հաստատության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) և մանկավարժական, գիտական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ՝ վերջին յոթ տարվա ընթացքում **»:	***Գյումրու հ. 25 հ/դ***
***4-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ. «**Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը՝ պատասխանատու է ուսումնական ծրագրերի կատարման համար»:*	***Մալիշկայի մ/դ***
***4-րդ գլխի 3-րդ կետի 2-րդ ենթակետ**. «Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը՝ կանոնակարգում է սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը»:*	***Մալիշկայի մ/դ***
***7-րդ գլխի 1-ին կետի 2-րդ ենթակետ**. «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչը ապահովում է կրթական ծրագրերի կատարումը»:*	***Խաչաղբյուրի մ/դ, Հայկավանի մ/դ, Հրազդանի հ. 11 հ/դ, Հրազդանի հ. 13 ա/դ, Ճամբարակի հ. 1 հ/դ, Մալիշկայի մ/դ, Շնողի մ/դ, Լեռնահովիտի հ/դ, Գյումրու հ. 27 մ/դ, Էօրնեկեան հանրակրթական դպրոց, Վանաձորի վարժարան, Ջերմուկի հ. 3 մ/դ***
***7-րդ գլխի 1-ին կետի 2-րդ, 2. 2-րդ ենթակետեր.** «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչը ապահովում է կրթական ծրագրերի կատարումը, ապահովում է*	***Ճամբարակի հ. 1 հ/դ***

կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների՝ հանրակրթության պետական չափորոշիչի հանրակրթական ծրագրերի բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջները՝ ըստ կրթական աստիճանների և առարկայական ծրագրերի հիման վրա յուրաքանչյուր սովորողի համար մշակված ԱՈՒՊ-ի »:	
7-րդ գլխի 1-ին կետի 11-րդ ենթակետ՝ *«Ուսուցիչը մասնակցում է հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին»:*	***Հայկավանի մ/դ, Սարամեջի մ/դ, Աղավնաձորի մ/դ***
8-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ. «*Հանրակրթական ուսումնական հաստատության հատուկ մանկավարժի որակավորման պահանջները՝ 1) բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան մանկավարժության որակավորմամբ»:*	***Քարագլխի մ/դ***
9-րդ գլխի 1-ին կետի 14-րդ ենթակետ. *«Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանը…. իրականացված աշխատանքների համար ներկայացնում է հաշվետվություն ուսումնական հաստատության ղեկավարությանը»:*	***Ճամբարակի հ. 1 հ/դ***
9-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ. «*Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ»:*	***Գյումրու հ. 38 հ/դ***
10-րդ գլխի 1-ին կետի 6-րդ ենթակետ. « *Սոցիալական մանկավարժը …. ուսուցչի հետ միասին մասնակցում է սովորողների մասնագիտական կողմնորոշման բացահայտմանը, զարգացմանը և աշխատանքային գործունեության նախապատրաստմանը՝ հաշվի առնելով սովորողների կարողությունները, նախասիրությունները»:*	***Աղավնաձորի մ/դ***
10-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ. «*Հանրակրթական ուսումնական հաստատության սոցիալական մանկավարժի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն (սոցիալական մանկավարժություն, սոցիալական աշխատանք՝ մասնագիտություններ որակավորմամբ»:*	***Գյումրու հ. 9 հ/դ***
11-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ. *«Հանրակրթական ուսումնական հաստատության զինղեկի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն, <u>սպայական կոչում</u>)»:*	***Գյումրու հ. 38 հ/դ***
12-րդ գլխի 1-ին կետի 9-րդ, 10-րդ, 11-րդ ենթակետեր. *«Հանրակրթական ուսումնական հաստատության գրադարանավարը աջակցում է սովորողներին՝ ընթերցասրահում դասերին պատրաստվելուն՝ օգտագործելով գրադարանային հավաքածուում առկա տեղեկատվությունը, այդ թվում՝ էլեկտրոնային (համացանցի) ռեսուրսները, օժանդակում է շնորհանդեսների, գրական քննարկումների, կինոդիտումների, ներկայացումների, այլ մշակութային միջոցառումների կազմակերպմանը…»:*	***Ճամբարակի հ. 1 հ/դ***
12-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ. « *Հանրակրթական ուսումնական հաստատության գրադարանավարի պաշտոնն*	***Ուջանի մ/դ***

զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին տասը տարվա ընթացքում գրադարանային կամ մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ»:	
14-րդ գլխի 1-ին կետի 11-րդ ենթակետ՝ *«Ուսուցչի օգնականը մասնակցում է հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին»:*	***Հայկավանի մ/դ,*** ***Իջևանի հ. 3 հ/դ,*** ***Սարամեջի մ/դ***
14-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ. *«Ուսուցչի օգնականի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն մանկավարժական կրթություն կամ բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ»:*	***Հրազդանի 11 հ/դ,*** ***Ճամբարակի հ. 1 հ/դ,*** ***Գյումրու հ. 25 հ/դ***
14-րդ գլխի 3-րդ կետի 2-րդ ենթակետ. *«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնականի պաշտոնը կարող է զբաղեցնել սույն պաշտոնի որակավորման պահանջները բավարարող և տվյալ հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցչի պաշտոնում չաշխատող անձը»:*	***Քարագլխի մ/դ,*** ***Գյումրու հ. 9 հ/դ***
ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված հավելված N 3. «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն»	
24-րդ կետ. *«Սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ (կիսամյակային և տարեկան) գնահատումը, դրա ձևերի, մեթոդների, հաճախականության, առաջադրանքների բովանդակության ընտրությունը կատարում է դպրոցը՝ հանրակրթության պետական չափորոշչին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան»:*	***Գյումրու հ. 25 հ/դ,*** ***Գյումրու հ. 38 հ/դ***
26-րդ կետ. *«Դպրոցական տարիքի երեխաներին դպրոցը հանրակրթության մեջ ընդգրկում, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների, առողջական վիճակի պատճառով ուսումնական հաստատություններ հաճախել չկարողացող սովորողների կրթության կազմակերպման հետ կապված իրավահարաբերությունները, արձակուրդների ժամկետները և տևողությունը, պետական ավարտական քննությունների ժամկետները և անցկացման կարգը, սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, խրախուսման, սովորողի փոխադրման և ավարտման, սովորողին այլ դպրոց տեղափոխելու և ազատելու, սովորողների անհատական ուսուցման, ինչպես նաև դրսեկության ձևով հանրակրթությունը կազմակերպում է նախարարության սահմանած կարգերով»:*	***Գառնիի հ. 1 հ/դ,*** ***Իջևանի հ. 3 հ/դ,*** ***Սարամեջի մ/դ,*** ***Գյումրու հ. 38 հ/դ***
48-րդ կետի 1-ին ենթակետ. *«Դպրոցի տնօրենը խորհրդի քննարկմանն է ներկայացնում դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքները ...»:*	***Գառնիի հ. 1 հ/դ,*** ***Հայկավանի մ/դ,*** ***Ճամբարակի հ. 1 հ/դ,*** ***Նոր Արտամետի մ/դ,*** ***Շնողի մ/դ,*** ***Իջևանի հ. 3 հ/դ,*** ***Լեռնահովիտի հ/դ,*** ***Կաթնառատի մ/դ,*** ***Սիսիանի ա/դ,***

	Աշոցքի մ/դ
48-րդ կետի 3-րդ ենթակետ. *«Դպրոցի տնօրենը խորհրդի հավանությանն է ներկայացնում դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կազմը»:*	***Գառնիի հ. 1 հ/դ,*** ***Ճամբարակի հ. 1 հ/դ,*** ***Իջևանի հ. 3 հ/դ,*** ***Լեջանի մ/դ,*** ***Լեռնահովիտի հ/դ,*** ***Սարամեջի մ/դ,*** ***Գյումրու հ. 27 մ/դ***
48-րդ կետի 5-րդ ենթակետ. *«Դպրոցի տնօրենը մանկավարժական խորհրդի ներկայացմամբ՝ հաստատում է … տնօրենի տեղակալների ու մանկավարժների հաշվետվությունները»:*	***Ճամբարակի հ. 1 հ/դ,*** ***Լեջանի մ/դ,*** ***Լեռնահովիտի հ/դ***
48-րդ կետի 7-րդ ենթակետ. *«Դպրոցի տնօրենը նախարարության կողմից հաստատված ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակում և խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը»:*	***Շնողի մ/դ,*** ***Իջևանի հ. 3 հ/դ,*** ***Սարամեջի մ/դ,*** ***Գյումրու հ. 27 մ/դ***
48-րդ կետի 8-րդ ենթակետ. *«Դպրոցի տնօրենը՝ համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ …իրականացնում է … մանկավարժական և այլ կադրերի… ընտրությունը …»*	***Գառնիի հ. 1 հ/դ,*** ***Հայկավանի մ/դ,*** ***Հրազդանի հ. 11 հ/դ,*** ***Ճամբարակի հ. 1 հ/դ,*** ***Մալիշկայի մ/դ,*** ***Նոր Արտամետի մ/դ,*** ***Շնողի մ/դ,*** ***Քասախի հ. 2 մ/դ,*** ***Արթիկի հ. 4 հ/դ,*** ***Իջևանի հ. 3 հ/դ,*** ***Իջևանի հ. 4 հ/դ,*** ***Լեջանի մ/դ,*** ***Լեռնահովիտի հ/դ,*** ***Ուջանի մ/դ,*** ***Սարամեջի մ/դ,*** ***Քարագլխի մ/դ,*** ***Օյունջյան վարժարան,*** ***Աղավնաձորի մ/դ,*** ***Գյումրու հ. 9 հ/դ,*** ***Գյումրու հ. 25 հ/դ,*** ***Գյումրու հ. 38 հ/դ,*** ***Աբովյանի հ. 10 հ/դ***
48-րդ կետի 10-րդ ենթակետ. ***«****Դպրոցի տնօրենը՝ իրականացնում է վերահսկողություն …, դպրոցի աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ»:*	***Ճամբարակի հ. 1 հ/դ***
48-րդ կետի 12-րդ ենթակետ. *«Դպրոցի տնօրենն ուսումնական պլանին համապատասխան՝ ապահովում է կրթական ծրագրերի իրականացումը, կրթական գործընթացի կազմակերպումը և կրում է պատասխանատվություն կրթության որակի և բովանդակության համար»:*	***Գավառի հ. 1 հ/դ,*** ***Խաչաղբյուրի մ/դ,*** ***Հայկավանի մ/դ,*** ***Հրազդանի 11 հ/դ,*** ***Ճամբարակի հ. 1 հ/դ,*** ***Մալիշկայի մ/դ,*** ***Լեռնահովիտի հ/դ,*** ***Գյումրու հ. 27 մ/դ,*** ***Սիսիանի ա/դ,*** ***Ջերմուկի հ. 3 մ/դ***
48-րդ կետի 13-րդ ենթակետ. ***«*** *Օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն ներքին կարգապահական կանոնների մշակման, ներդրման, … համար»:*	***Շնողի մ/դ***

48-րդ կետի 18-րդ ենթակետ. *«Դպրոցի տնօրենը սահմանված կարգով ձևավորում է դպրոցի սովորողների համակազմը»:*	***Գառնիի հ. 1 հ/դ,*** ***Հրազդանի հ. 11 հ/դ,*** ***Ձորակապի մ/դ,*** ***Ճամբարակի հ. 1 հ/դ,*** ***Մալիշկայի մ/դ,*** ***Շնողի մ/դ,*** ***Քասախի հ. 2 մ/դ,*** ***Կաթնառատի մ/դ,*** ***Ուջանի մ/դ,*** ***Սարամեջի մ/դ,*** ***Վանաձորի հ. 20 հ/դ,*** ***Վանաձորի հ. 27 հ/դ,*** ***Գյումրու հ. 27 հ/դ,*** ***Սիսիանի ա/դ,*** ***Աշոցքի մ/դ,*** ***Գյումրու հ. 38 հ/դ***
69-րդ կետ. *«Տնօրենի բացակայության, ինչպես նաև տնօրենի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում լիազորված մարմինը՝ ըստ ենթակայության, հաստատության տնօրենի պաշտոնակատար է նշանակում տնօրենի տեղակալներից մեկին կամ հաստատության տնօրենի պարտականությունները կատարող այլ անձի, ով տվյալ հաստատության խորհրդի անդամ չէ»:*	***Իջևանի հ. 3 մ/դ,*** ***Իջևանի հ. 4 մ/դ***
74-րդ կետի 7-րդ ենթակետ. «*Դասարանի ղեկավարը, իսկ տարրական դպրոցում՝ դասվարը՝ դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը****»:***	***Ճամբարակի հ. 1 հ/դ***
75-րդ կետ. «*Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ****»:***	***Լեռնահովիտի հ/դ***
76-րդ կետ. « *Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում****»:***	***Գյումրու հ. 38 հ/դ***
77-րդ կետ. *« Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները»:*	***Հրազդանի 11 հ/դ***
78-րդ կետ. *«Մանկավարժական խորհուրդը նախարարության սահմանած կարգով՝ իր կազմից, փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրում է խորհրդի անդամների****»:***	***Ճամբարակի հ. 1 հ/դ***
79-րդ կետի 3-րդ ենթակետ. «Մ*անկավարժական խորհուրդը քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը»:*	***Արթիկի հ. 4 հ/դ,*** ***Գյումրու հ. 38 հ/դ***
79-րդ կետի 5-րդ ենթակետ. «*Մանկավարժական խորհուրդը քննարկում է հանրակրթական ուսումնական առարկաների*	***Լեջանի մ/դ***

չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը»:	
80-րդ կետի 7-րդ ենթակետ. *«Սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ (կիսամյակային և տարեկան) գնահատումը, դրա ձևերի, մեթոդների, հաճախականության, առաջադրանքների բովանդակության ընտրությունը կատարում է դպրոցը՝ հանրակրթության պետական չափորոշչին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան, մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում բացակայությունների պատճառով նախատեսված քննական առարկաների որոշման և քննությունների անցկացման ժամանակացույցի»:*	***Իջևանի հ. 3 հ/դ***
80-րդ կետի 10-րդ ենթակետ. *«Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում՝ օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կամ խրախուսանքի միջոց կիրառելու»:*	***Ճամբարակի հ. 1 հ/դ***
80-րդ կետի 11-րդ ենթակետ. *«Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում … դպրոցի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին և այն ներկայացնում է տնօրենին՝ հաստատման»:*	***Գյումրու հ. 38 հ/դ***
82-րդ կետ. *«Մանկավարժական խորհրդի նիստերն արձանագրում է մանկավարժական խորհրդի անդամներից ընտրված մշտական քարտուղարը»:*	***Գյումրու հ. 25 հ/դ***
83-րդ կետ. *«Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր. . . »*	***Ճամբարակի հ. 1 հ/դ,*** ***Աշոցքի մ/դ***
89-րդ կետ. *«Մանկավարժական խորհրդի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած մանկավարժական խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Մանկավարժական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի փոխանցումն արգելվում է»:*	***Քասախի հ. 2 մ/դ***
91-րդ կետ. *« Առարկայական մեթոդական միավորումներն ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մեթոդական միավորումներ՝ հարակից առարկաների ուսուցիչներից»:*	***Լեռնահովիտի հ/դ,*** ***Աղավնաձորի մ/դ,*** ***Աշոցքի մ/դ,*** ***Հայկավանի մ/դ***
92-րդ կետ. *«Դասվարների համար ստեղծվում է տարրական կրթության մեթոդական միավորում»:*	***Լեռնահովիտի հ/դ,*** ***Հայկավանի մ/դ***
93-րդ կետի 1-ին ենթակետ. *«Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝ 1) քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին (դասվարներին) տալիս երաշխավորություններ, , առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ»:*	***Լեջանի մ/դ***
93-րդ կետի 2-րդ ենթակետ. *«Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝ քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը»:*	***Գառնիի հ. 1 հ/դ,*** ***Ճամբարակի հ. 1 հ/դ,*** ***Իջևանի հ. 3 հ/դ,*** ***Լեջանի մ/դ,*** ***Լեռնահովիտի հ/դ,*** ***Սարամեջի մ/դ,*** ***Գյումրու 38 հ/դ***

93-րդ կետի 6-րդ ենթակետ. *«Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝ 6) կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ»:*	***Լեջանի մ/դ***
93-րդ կետի 7-րդ ենթակետ.*«Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝ 7) ուսուցիչներին (դասվարներին) հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ»:*	***Լեջանի մ/դ***
93-րդ կետի 9-րդ ենթակետ. *«Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝. . . մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն»:*	***Գառնիի հ. 1 հ/դ,*** ***Ճամբարակի հ. 1 հ/դ,*** ***Իջևանի հ. 3 հ/դ,*** ***Լեռնահովիտի հ/դ,*** ***Սարամեջի մ/դ***
93-րդ կետի 10-րդ ենթակետ. *«Կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին»:*	***Գառնիի հ. 1 հ/դ,*** ***Ճամբարակի հ. 1 հ/դ,*** ***Շնողի մ/դ,*** ***Լեռնահովիտի հ/դ,*** ***Սարամեջի մ/դ***
93-րդ կետի 11-րդ ենթակետ.*«Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝ կազմակերպում է դպրոցական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ»:*	***Կաթնառատի մ/դ***
95-րդ կետ. *«Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ»:*	***Լեռնահովիտի հ/դ***
97-րդ կետ.*«Դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահն ընտրվում է փակ քվեարկությամբ, ծնողական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է»:*	***Ճամբարակի հ. 1 հ/դ***
107-րդ, 108-րդ կետեր. *«Դպրոցի սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմինն աշակերտական խորհուրդն է, որն ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան՝ դպրոցի գործունեության կազմակերպմանը նպաստելու, անմիջականորեն իրենց վերաբերող հարցերի մասին սովորողների կարծիքի ազատ արտահայտումն ապահովելու, դրանք դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններ ներկայացնելու, սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ դպրոցի կանոնադրության դրույթների պահպանումը վերահսկելու նպատակով և ղեկավարվում է նախարարության կողմից հաստատված աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությամբ», «Աշակերտները կարող են նաև ըստ հետաքրքրությունների ստեղծել ակումբներ, միավորումներ, որոնք աշակերտական ինքնավարության զարգացմանը նպաստող օղակներ են»:*	***Լեռնահովիտի հ/դ***
ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1496-Ն որոշմամբ հաստատված հավելված. «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական և (կամ) մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգը հաստատելու մասին»	

6-րդ կետ՝ «*Լրացուցիչ կրթությունն իրականացվում է երկկողմ համաձայնությամբ՝ հաստատության և ծնողի, օրինական ներկայացուցչի, կազմակերպության (այսուհետ՝ պատվիրատու) միջև երկու հավասարազոր օրինակից կնքվող պայմանագրի հիման վրա, որի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը****»:***	***Շնողի մ/դ***
ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի № 396-Ն հրամանով հաստատված հավելված. «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգ»	
5-րդ կետ. *«Անկախ պատճառներից մրցույթը չկայանալու դեպքում Թափուր տեղը լրացնելու համար պարբերաբար հայտարարվում է մրցույթ՝ մինչև հաղթող ճանաչվելը: Մրցույթը հայտարարվում է Թափուր տեղ առաջանալու օրվանից՝ 7-օրյա ժամկետում»:*	***Հայկավանի մ/դ***
6-րդ կետ. *«Թափուր տեղ առաջանալու օրվանից մինչև մրցույթ կայանալու, թափուր տեղը մրցութային կարգով չհամալրվելու կամ մրցույթի արդյունքում հաղթող չճանաչվելու դեպքում (անկախ պատճառներից) որոշակի ժամկետով պայմանագրով աշխատանքի են ընդունվել համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անձինք»:*	***Աբովյանի հ. 10 հ/դ,*** ***Մալիշկայի մ/դ,*** ***Նոր Արտամետի մ/դ,*** ***Շնողի մ/դ,*** ***Իջևանի հ. 4 հ/դ,*** ***Լեջանի մ/դ,*** ***Գյումրու հ. 9 հ/դ,*** ***Քասախի հ. 2 մ/դ***
15-րդ կետ. «*Մրցույթին կարող է մասնակցել Հաստատության փվյալ Թափուր տեղին ներկայացվող՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը»:*	***Աբովյանի հ. 10 հ/դ,*** ***Մալիշկայի մ/դ***
20-րդ կետ. « *Մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորվում է մրցույթի անցկացման օրվանից առնվազն 3 օր առաջ, անվանական կազմը հաստատում է հաստատության տնօրենը՝ այդ մասին տեղեկացնելով հանձնաժողովի անդամներին****»:***	***Գառնիի հ. 1 հ/դ,*** ***Շնողի մ/դ***
21-րդ կետ. «*Հանձնաժողովը կազմված է 5 անդամից՝ տնօրեն (տնօրենի պաշտոնակատար), տնօրենի ուսումնական գծով տեղակալ, համապատասխան մասնախմբի ղեկավար, ուսուցիչ, մեկ ուսուցիչ այլ հաստատությունից՝ համաձայնությամբ»:*	***Լեջանի մ/դ,*** ***Հայկավանի մ/դ,*** ***Վանաձորի վարժարան***
22-րդ կետ. *«Հանձնաժողովը կազմված է 5 անդամից՝ տնօրեն (տնօրենի պաշտոնակատար), տնօրենի ուսումնական գծով տեղակալ, համապատասխան մասնախմբի ղեկավար, ուսուցիչ, մեկ ուսուցիչ այլ հաստատությունից՝ համաձայնությամբ»:*	***Վանաձորի վարժարան***
ՀՀ կրթության և գիտության նախարարի 24.11.2010 թ. N 1640-Ն հրամանով հաստատված հավելված. «ՀՀ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն սովորողի ընդգրկման, հաստատությունից սովորողի տեղափոխման և ազատման, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման կարգ»	
10-րդ կետ. *«Սույն կարգի 15-րդ կետով սահմանված փաստաթղթերի առկայության և կրթական աստիճանների փևողության համապատասխանության դեպքում այլ երկրում ուսումնառությունն ընդհատած և Հայաստանի Հանրապետություն վերադարձած սովորողի դասարանը որոշվում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա»:*	***Գառնիի հ. 1 հ/դ,*** ***Մալիշկայի մ/դ,*** ***Աշոցքի մ/դ***
16-րդ կետ. «*Սովորողի ազատումը դպրոցից կատարվում է՝ 1) ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա, 2)*	***Գյումրու հ. 25 հ/դ***

դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա»:	
20-րդ կետ *« . . . 10-րդ կետի պահանջների կատարումն ապահովելու նպատակով տնօրենի հրամանով ստեղծվում է առարկայական մասնագետների խումբ: Մասնագիտական եզրակացությունը տրվում է սովորողի՝ ուսումնական պլանով նախատեսված տվյալ դասարանի բոլոր առարկաների գիտելիքների գրավոր (դրա անհնարինության դեպքում՝ համապատասխան՝ տվյալ առարկային) ստուգման արդյունքում: Հիմք ընդունելով մասնագիտական խմբի գրավոր եզրակացությունը՝ սովորողի փաստացի առարկայական գիտելիքների մասին, տնօրենը սովորողին ընդունում է համապատասխան դասարան, հաստատում է ուսումնական պլանով նախատեսված առարկաներից մեթոդմիավորումների կողմից ներկայացված անհատական առարկայական պլանները, լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը, ըստ որի՝ սովորողի համար կազմակերպվում է ուսուցում՝ բաց թողած ծրագրային նյութը յուրացնելու համար»:*	***Վանաձորի հ. 27 հ/դ***
ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2011 թվականի մայիսի 17-ի N 571-Ն հրամանով հաստատված հավելված. ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություն պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրություն	
4-րդ գլուխ. Ընտրական հանձնախումբը. 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ կետեր	***Լեռնահովիտի հ/դ***
5-րդ գլուխ. Սովորողների ինքնավարության դասարանական մարմինները. 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ կետեր	***Լեռնահովիտի հ/դ***
7-րդ գլուխ. Աշակերտական խորհրդի իրավասությունը և պատասխանատվությունը. 39-րդ, 40-րդ, 41-րդ կետեր	***Լեռնահովիտի հ/դ***
8-րդ գլուխ. Աշակերտական խորհրդի նախագահի լիազորությունները. 42-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ կետեր	***Լեռնահովիտի հ/դ***
ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված հավելված. «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգ»	
9-րդ կետ.*«Մարզային ենթակայության հաստատությունների. 1) առանձին խորհուրդներում մարզպետն առաջադրում է խորհրդի 4 անդամ, <u>որից մեկին</u> գրավոր ձևով մարզպետին է ներկայացնում տվյալ համայնքի ղեկավարը»:*	***Ջերմուկի հ. 3 մ/դ***
11-րդ կետ. *« Հաստատության ծնողական խորհուրդը իր կազմից փակ քվեարկությամբ ընտրում է Հաստատության Խորհրդի 2 անդամ...»:*	***Ճամբարակի հ. 1 հ/դ***
ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 5-ի N 280-Ն հրամանով հաստատված հավելված. «Հայաստանի Հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման կարգ»	
1-ին գլխի 5-րդ կետ. *« Օլիմպիադաները անցկացվում են ..հանրակրթական առարկաներից՝ աշխարհագրություն, ..ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, օլիմպիադան անց է*	***Ճամբարակի հ. 1 հ/դ, Կաթնառատի մ/դ, Ուջանի մ/դ***

կացվում 3 փուլով՝ համաձայն նախարարության սահմանած ընթացակարգերի՝ դպրոցական փուլ.»:	
4-րդ գլխի 3-րդ կետ. *«Օլիմպիադաները նախապատրաստելու և անցկացնելու նպատակով ստեղծվում են հանրապետական, մարզային, տարածքային, **դպրոցական** օլիմպիական կազմկոմիտեներ, դպրոցական կազմկոմիտեի ... կազմը հաստատում է տնօրենը»:*	***Գառնիի հ. 1 հ/դ, Ձորակապի մ/դ, Շնողի մ/դ, Իջևանի հ. 3 հ/դ, Իջևանի հ. 4 հ/դ, Կաթնառատի մ/դ, Ուջանի մ/դ, Սարամեջի մ/դ, Ճամբարակի հ. 1 հ/դ, Գյումրու հ. 9 հ/դ***
12-րդ գլխի 1-ին կետ. *«Դպրոցական կազմկոմիտեն սահմանում է դպրոցական փուլի անցկացման ժամկետները՝ ըստ առարկաների»:*	***Ճամբարակի հ. 1 հ/դ, Շնողի մ/դ, Իջևանի հ. 3 հ/դ, Կաթնառատի մ/դ, Ուջանի մ/դ, Սարամեջի մ/դ***
12-րդ գլխի 2-րդ կետ. *«Դպրոցական կազմկոմիտեն նախապատրաստում է դպրոցական փուլի կազմակերպումը՝ համաձայն սահմանված ընթացակարգի»:*	***Ճամբարակի հ. 1 հ/դ, Շնողի մ/դ, Իջևանի հ. 3 հ/դ, Կաթնառատի մ/դ, Ուջանի մ/դ, Սարամեջի մ/դ***
12-րդ գլխի 3-րդ կետ. *«Դպրոցական կազմկոմիտեի գործառույթները. առարկայական հանձնաժողովների երաշխավորության հիման վրա դպրոցական փուլի հաղթողներին ներկայացնում է մասնակցելու տարածքային փուլին»:*	***Շնողի մ/դ, Իջևանի հ. 3 հ/դ, Իջևանի հ. 4 հ/դ, Կաթնառատի մ/դ, Ուջանի մ/դ, Սարամեջի մ/դ, Գյումրու հ. 9 հ/դ***
12-րդ գլխի 4-րդ կետ. *«Դպրոցական կազմկոմիտեն վերահսկում է օլիմպիադաների անցկացումը»:*	***Շնողի մ/դ, Իջևանի հ. 3 հ/դ, Կաթնառատի մ/դ, Ուջանի մ/դ, Սարամեջի մ/դ, Ճամբարակի հ. 1 հ/դ***
13-րդ գլխի 1-ին կետ. «*Դպրոցական առարկայական հանձնաժողովների գործառույթներն. անցկացնում են դպրոցական փուլը և պատասխանատվություն են կրում ողջ գործընթացի համար՝ համաձայն սահմանված ընթացակարգի»:*	***Իջևանի հ. 3 հ/դ, Իջևանի հ. 4 հ/դ, Կաթնառատի մ/դ, Ուջանի մ/դ, Սարամեջի մ/դ, Ճամբարակի հ. 1 հ/դ, Գյումրու հ. 9 հ/դ,***
13-րդ գլխի 2-րդ կետ. « *Դպրոցական առարկայական հանձնաժողովների գործառույթները. որոշում են դպրոցական փուլի հաղթողներին և նրանց պարգևատրում համապատասխան դիպլոմներով ու գովասանագրերով»:*	***Իջևանի հ. 3 հ/դ, Իջևանի հ. 4 հ/դ, Կաթնառատի մ/դ, Սարամեջի մ/դ, Գյումրու հ. 9 հ/դ***
13-րդ գլխի 3-րդ կետ. *«Դպրոցական առարկայական հանձնաժողովների գործառույթները. դպրոցական կազմկոմիտեին առաջարկություն են ներկայացնում տարածքային փուլին մասնակցող թիմերի կազմի մասին»:*	***Իջևանի հ. 3 հ/դ, Իջևանի հ. 4 հ/դ, Կաթնառատի մ/դ, Ուջանի մ/դ, Սարամեջի մ/դ, Գյումրու հ. 9 հ/դ***

14-րդ գլխի 1-ին կետ. *«Դպրոցական փուլը կազմակերպվում է դպրոցներում դեկտեմբեր-հունվար ամիսներին..»:*	***Ձորակապի մ/դ, Ճամբարակի հ. 1 հ/դ, Լեջանի մ/դ, Կաթնառատի մ/դ, Ուջանի մ/դ***

8. Ամփոփում

Հաշվետվությունում ներկայացվել են ընդհանուր տեղեկություններ ստուգումների վերաբերյալ, ստուգումների արդյունքները՝ ըստ ստուգաթերթերի, խախտումների բնույթները՝ ըստ ստուգումների արդյունքում կազմված ակտերի և լիազոր մարմինների ղեկավարներին ներկայացված խնդիրների, առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները և բաշխվածությունը՝ ըստ ՀՀ մարզերի ստուգված դպրոցների, ընդհանուր տեղեկատվություն ստուգված դպրոցներին տրված հանձնարարականների, ընդհանուր տեղեկատվություն դպրոցներին տրված հանձնարարականների և 1-ին եռամսյակում տնօրենների կողմից ներկայացված կատարողականների համադրման արդյունքների, տեղեկատվություն ստուգումների արդյունքում արձանագրված կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ:

Ստուգված 38 դպրոցների ստուգումների արդյունքների վերլուծությունը, ըստ ստուգաթերթերի, ունի հետևյալ պատկերը.

❖ **Ամենաբարձր ռիսկային միավորը** գրանցվել է Ճամբարակի հիմնական դպրոցում՝ **11,6 միավոր,** իսկ **ամենացածրը՝ 0 միավոր,** Վանաձորի հ. 23 հիմնական, Մարալիկի հ. 1 և Արմավիրի միջնակարգ դպրոցներում:

❖ Ստուգված **38** դպրոցներից **23-ը (60,5%) բարձր** ռիսկային խմբի դպրոցներ են, **15-ը՝ (39.5%), միջին**:

Համեմատելով ստուգումների արդյունքների միջինացված միավորները՝ կարող ենք նշել, որ կրթական գործընթացի իրականացումը 38 դպրոցների միջինացված ռիսկային միավորի համեմատ **պակաս ռիսկային է** ՀՀ Շիրակի, ապա ՀՀ Լոռու մարզերի ստուգված դպրոցներում, **առավել ռիսկային՝** ՀՀ Կոտայքի մարզի ստուգված դպրոցներում:

2022 թվականի 2-րդ եռամսյակում ստուգված **38** դպրոցներից **16-ը (42%)** տեսչական մարմնի կողմից ստուգվել են նաև նախորդ տարիներին. **4-ը՝** 2018, **12-ը՝** 2019 թվականներին:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ **16** դպրոցների ձևավորված ռիսկային միավորները **2022 թվականի** ստուգման արդյունքում նախորդ ռիսկային միավորի համեմատ՝ **նվազել են՝ 10** դպրոցներում **(63%), աճել են 3 (19%), մնացել է նույնը՝ 1 (6%) և ռիսկային միավորը զրոյացել է՝ 2 (12%)** դպրոցներում:

Ստուգումների արդյունքում արձանագրվել են «Կրթության մասին» և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև կրթության բնագավառը կարգավորող **10** նորմատիվ իրավական ակտերի **118** պահանջների խախտումներ:

2022 թվականի 2-րդ եռամսյակում ստուգված (ամփոփված) **38** դպրոցներից **35-ում (92%)** հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենդրության պահանջների **327** խախտումներ, որոնցից **43-ը (13%)** նշվել են լիազոր մարմինների ղեկավարներին ուղղված գրություններում:

Առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները՝ **ըստ դպրոցների թվի** (%), վերաբերել են կանոնադրությունների՝ օրինակելի կանոնադրությանը անհամապատասխանությանը՝ **34 (89%),** մանկավարժական աշխատողների նշանակմանը՝ **22 (58%),** խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը՝ **16 (42%),** սովորողների համակազմի ձևավորմանը՝ **15 (39%),** ուսումնական պլանի պահանջների կատարմանը՝ **14 (37%),** պաշտոնային պարտականությունների կատարմանը և օլիմպիադայի, ներքին գնահատման գործընթացների իրականացմանը՝ **11-ական (29%-ական) դպրոցներում,** իսկ՝ **ըստ խախտումների թվի** (%), վերաբերել են մանկավարժական աշխատողների նշանակմանը՝ **72 (22%),** խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը՝ **46 (14%),** պաշտոնային պարտականությունների կատարմանը **44 (13%),** կանոնադրության անհամապատասխանությանը՝ **34 (10%),** սովորողների համակազմի ձևավորմանը՝ **27 (8%),** ներքին գնահատման գործընթացին՝ **26 (8%),** ուսումնական պլանի պահանջների կատարմանը՝ **22 (7%),** օլիմպիադայի գործընթացին՝ **21 (6%) խախտումներ:**

Ինչպես արդեն նշվել է՝ **2022 թվականի 2-րդ եռամսյակում** ստուգումներ իրականացվել են ՀՀ Արագածոտնի մարզի **1,** ՀՀ Սյունիքի, Արմավիրի, Տավուշի մարզերի՝ **2-ական,** ՀՀ Վայոց ձորի մարզի՝ **3,** ՀՀ Գեղարքունիքի մարզի՝ **4,** ՀՀ Կոտայքի մարզի՝ **6,** ՀՀ Լոռու մարզի՝ **8** և ՀՀ Շիրակի մարզի՝ **10** դպրոցներում:

Առավել հաճախ կրկնվող խախտումները՝ ըստ ՀՀ մարզերի ստուգված դպրոցների և տոկոսային արտահայտության, հետևյալ բնույթի են.

- մանկավարժական աշխատողների նշանակման խախտումներն առավելագույնն արձանագրվել են ՀՀ Արագածոտնի և Տավուշի մարզերում ստուգված **բոլոր** դպրոցներում՝ **100%,** խախտում չի արձանագրվել ՀՀ Սյունիքի մարզում,
- կանոնադրության անհամապատասխանության առավելագույն խախումները՝ ՀՀ Սյունիքի, Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերում ստուգված **բոլոր** դպրոցներում՝ **100%,** խախտում չի արձանագրվել ՀՀ Արագածոտնի մարզում,
- խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը վերաբերող խախտումներն առավելագույնը՝ ՀՀ Շիրակի մարզում ստուգված դպրոցների **60%-ում,** խախտում չի արձանագրվել ՀՀ Արագածոտնի, Սյունիքի և Արմավիրի մարզերում,
- պաշտոնային պարտականությունների կատարմանը վերաբերող խախտումներն առավելագույնն արձանագրվել են ՀՀ Սյունիքի, Տավուշի և

Գեղարքունիքի մարզերում ստուգված դպրոցների **50%-ում,** իսկ խախտում չի արձանագրվել՝ ՀՀ Արագածոտնի և Արմավիրի մարզերում:

Ստուգումների արդյունքում հայտնաբերված **327** խախտումներից ժամկետանց են համարվել **222-ը (68%),** որոնց գերակշռող մասը՝ ըստ բնույթների, վերաբերել է՝ մանկավարժական աշխատողների նշանակմանը՝ **23%-ը,** խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը՝ **14%-ը,** ներքին գնահատման գործընթացի իրականացմանը՝ **12%-ը,** պաշտոնային պարտականությունների կատարմանը՝ **12%-ը,** սովորողների համակազմի ձևավորմանը **11%-ը,** ուսումնական պլանի պահանջների կատարմանը՝ **11%-ը,** օլիմպիադայի ընթացակարգին՝ **10%-ը:**

Վերոնշյալ խախտումները համարվել են ժամկետանց, քանի որ այդ խախտումների հետևանքները վերացնել արդեն իսկ հնարավոր չէ՝ կատարվել են նախորդող ուսումնական տարիներին կամ խախտման հետևանքները վերացվել են ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատվածում:

Ինչպես արդեն նշվել է՝ խախտումներ արձանագրվել են 38 դպրոցներից 35-ում (92%): Խախտումների հետևանքները վերացնելու նպատակով տեսչական մարմնի ղեկավարի համապատասխան կարգադրագրերով տրվել են **62** հանձնարարականներ 35 դպրոցներից **20-ին (57%):**

Առավել հաճախ կրկնվել են հետևյալ բնույթի հանձնարարականները.

- մանկավարժական աշխատողների նշանակում. **12 (60%)** դպրոցների՝ **20 (32%),**
- խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության իրականացում. **11 (55%)** դպրոցների՝ **15 (24%),**
- տնօրենի պաշտոնային պարտականությունների կատարում. **7 (35%)** դպրոցների՝ **19 (31%)** հանձնարարականներ:

2022 թվականի 2-րդ եռամսյակը, որպես հանձնարարականների կատարողականների ներկայացման ժամկետ, սահմանվել է **33** դպրոցներին տրված **123** հանձնարարականների համար:

33 դպրոցներից **26-ի (79%)** կողմից կատարողականները ներկայացվել են սահմանված ժամկետում, **7-ի (21%)** դեպքում՝ սահմանված ժամկետից ուշ:

Տրված **123** հանձնարարականներից **41-ը** վերաբերել են մանկավարժական աշխատողների նշանակմանը, **13-ը՝** մեթոդմիավորումների գործունեությանը, **9-ը՝** ուսումնական պլանի պահանջների կատարմանը, **60-ը՝** այլ բնույթի: Այլ բնույթի հանձնարարականները հիմնականում վերաբերել են մանկավարժական խորհրդի գործունեությանը, ուսումնական պլանի պահանջների կատարմանը, կանոնադրության համապատասխանեցմանը, լիցենզիայի ապահովմանը, լիցենզիայի սահմանային թվերի համապատասխանեցմանը, սովորողների համակազմի, աշակերտական խորհրդի ձևավորմանը և այլն:

Ըստ դպրոցներից ստացված կատարողականների՝ **123** հանձնարարականներից կատարվել են **85-ը (69%),** կատարվել են մասամբ՝ **22-ը (18%),** չի կատարվել **16-ը (13%)**:

Հարկ է նշել, որ չկատարված հանձնարարականները վերաբերել են դպրոցի կանոնադրության, վարչական աշխատողների ուսումնական ծանրաբեռնվածության

համապատասխանեցմանը, սովորողների համակազմի, մեթոդական միավորումների ձևավորմանը:

«Ընթացքի մեջ» գտնվող **22** հանձնարարականներից **18-ը** վերաբերել են մանկավարժական աշխատողների նշանակումներին:

Ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումները հետագայում կանխելու, ինչպես նաև խախտումների հետևանքները վերացնելու նպատակով **առաջարկվել է՝**

Տնօրեններին.

սահմանել պատշաճ վերահսկողություն դպրոցի կրթական գործընթացի կազմակերպման, վարչական և մանկավարժական աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ, մանկավարժական աշխատողների նշանակումն իրականացնել համաձայն պաշտոնների նկարագրերի, սահմանված կարգով անցկացնել ուսուցչի թափուր տեղի համար մրցույթը, ձևավորել դպրոցի սովորողների համակազմը և այլն:

Լիազոր մարմնին.

ապահովել դպրոցի կանոնադրության մեջ համապատասխան փոփոխությունների ամրագրումը և սահմանված կարգով հաստատումը, սահմանել վերահսկողություն դպրոցների կողմից կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի պահանջների կատարման, հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման նկատմամբ:

Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչություն